Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material



ՅԱՒԵԼՈՒԱԾ

ԹԱՐԳՄԱՆԵԱՑ

ԳԱԲՐԻԷԼ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ԱՅՎԱԶԵԱՆՑ

ՄԻԱԲԱՆ ՍՐԲՈՑ ԷՋՄԻԱԾՆԻ.

Ի ՎԱՂԱՐՇԱՊԱՏ

Ի ՏՊԱՐԱՆԻ ՍՐԲՈՑ ԿԱԹՈՂԻԿԷ ԷՋՄԻԱԾՆԻ.

ՌՃԻԱ—1871

ՀՐԱՄԱՆԱՒ

Տ. Տ. ԳԷՈՐԳԵԱՑ Գ.

ՎԵՀԱՓԱՌ ԵՒ ՍՐԲԱԶՆԱԳՈՅՆ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ

ԱՄԵՆԱՑՆ ՀԱՅՈՑ.

(41193
41)

ՅԱՒԵԼՈՒԱԾ

Յանուսեանս մատենիկ յօրինեալ յամին 1869, որպէս յայտ է վերծանողաց, ստոյգ իմն գուշակութիւն է մոլորութեանն նորոյ, անսխալականութեան ասեմ պապին Հռովմայ՝ յոր խարդաւանել հանդերձէր հռովմէականն Եկեղեցի ի ձեռն Վատիկանեան Ժողովոյն։ Այլև զպատմութիւն այնր վրիպական վարդապետութեան հաւաստի վկայութեամբք ի մէջ բերեալ՝ յայս յանգուցանէ զբանս իւր, զի Ժողովն այն ըստ ամենայն հանգամանացն անարժան է կոչելոյ Ժողով տիեզերական կամ ընդհանրական, ուստի և սահմանք նորին անընդունելիք քրիստոնէից, և վարդապետութիւնն անսխալականութեան պապին զոր հնարի հաստատել Պիոս Թ ի ձեռն Ժողովոյն՝ անվաւեր և մոլորական։

Արդ Ժողովն այն եղև և կատարեցաւ, որպէս և ի կանխաբանութեան մերում յիշատակեցաք, և ի 6 (18) Յուլիսի 1870 ամի հրատարակեցաւ սահման կամ վճիռ նորին կանոնական կոնդակաւ պապին՝ յաղագս թէ անսխալական է պապն Հռովմայ ի վճիռս իւր զինդրոց հաւատոյ և զվարուց։ Յապուշ հարան ողջամիտքն ի քրիստոնէից արևելից և արևմտից առհասարակ, և գայթակղեցին նոքին իսկ հռովմէականքն. որք և ի լուր իրացն իբրև զծով ծփեալ ի սաստկութենէ հողմոյ շնչելոյ՝ ալեկոծեցան և ցարդ ևս ալեկոծեալ տարուբերին ընդ ամենայն կողմանս աշխարհի, մանաւանդ ի Գերմանիա, ի Գաղղիա, Յիտալիա և Յանգղիա, և հերձուածքս նորանորս կազմեն ի հռովմէական Եկեղեցւոջն, ունելով իւրեանց վարիչս և առաջնորդս յիմաստնագունեցն և յարիագոյն աստուածաբանից իւրաքանչիւր աշխարհաց, որպիսիք ոմանք հանդիսանան ի Գերմանիա Տէօլլինգէր, ի Գաղղիա Յակինթոս (Փէր Լուսէնթ), Յիտալիա Փասսաղլիա, Յաւրս-

տրիա Անթոն, յԱնգլիա Օվէռպէք, և այլուր այլք բազումք յոյժ յոյժ։

Ցաղագս այսր ամենայնի արժան համարեցաք և մեք՝ իբրու լրումն և ամբողջութիւն տալով մատենական Ցանոսի՝ յաւելուլ աստանօր նախ զԹարգմանութիւն կանոնական կոնդակի պապին Հռովմայ, և ապա զՀերքման Նորին՝ զոր գրեալ է Հայրն Կէթէ ի հոչակեալ ամսագրին իւրում ի ձև թղթոյ ուղղելոյ առ Պիոս Թ։

ԹԱՐԳՄԱՆԻՉՆ։

Կանոնաձեւն Կոնդակ Պիոսի Թ. յաղագս Եկեղեցւոյն Աստուծոյ, մատուցեալ ի քննութիւն Հարց պատուականաց։

Պիոս եպիսկոպոս ծառայ ծառայից Աստուծոյ, հաւանութեամբ սրբոյ Ժողովոյս, ի յաւիտենական յիշատակ իրացս։— Հովիւն յաւիտենական և վերադիտող (կամ եպիսկոպոս) հոգւոց մերոց, առ ի զաղատարարն զործ փրկութեան մերոյ մշտնջենաւորս առնելոյ, զԵկեղեցի սուրբ կառուցանել հաճեցաւ, յորում իբրև ի տան Աստուծոյ կենդանւոյ (Ա. Տիմ. Գ. 15) հաւատացեալքն ամենեքեան՝ միոյ հաւատոյ և սիրոյ զօդիւն կապակցեալք միաւորեսցին։ Որոյ վասն մինչև փառաւորեալն էր՝ աղաչեաց զՀայր՝ ոչ վասն առաքելոցն միայն, այլև վասն այնոցիկ որք հաւատալոց էին բանիւն նոցա յինքն, զի իցեն մի՝ որպէս նա ինքն Որդին և Հայրն մի են (Յովհ. ԺԷ. 1. 21)։ Սմին իրի զոր օրինակ զառաքեալն զորս ընտրեալ էր յաշխարհէ առաքեաց՝ որպէս ինքն առաքեալ էր ի Հօրէ, ըստ նմին և յԵկեղեցւոջ իւրում կամեցաւ զի լինիցին Հովիւք և վարդապետք մինչև ի կատարած աշխարհի։ Եւ որպէս զի եպիսկոպոսութիւնն ևս իցէ մի և անբաժանելի, և ի ձեռն քահանայիցն ընդ միմեանս կցորդելոց՝ ողջոյն իսկ հաւատացելոցն բազմութիւն ի միութեան հաւատոյ և հաղորդակցութեան պահեսցի, զերանելին զՊետրոս նախադաս այլոցն արար առաքելոց, և ի նմա կարգեաց զմշտնջենաւորուղն աղբիւրն միութեան և զհիմն երևելի, յորոյ ամրութեանն վերայ կառուսցի տաճարն յաւիտենական, և երկնաբերձն Եկեղեցի ի հաստատութեան այնր հաւատոյ ամ-

բարձեալ կանգնեսցի։ Եւ քանզի դրունք դժոխոց առ ի կոր-
ծանել զԵկեղեցին, եթէ իցէ հնար, օր քան զօր առաւելա-
գոյն թշնամութեամբ ընդդէմ կ.քրին աստուածադիր հիման
նորին, մեք ի պահպանութիւն, յանքոյթ յապահովութիւն և
յաճումն կաթուղիկէ հօտին, հաւանութեամբ սրբոյ ժո-
ղովոյս՝ կարևոր դատիմք զվարդապետութիւնն որ յաղագս
կարգի, մշտնջենաւորութեան և իսկութեան սրբոյ առաքելա-
կան առաջնութեան (կամ նախագահութեան) յոր հաստա-
տեալ կայ զօրութիւն և ամրութիւն բովանդակ Եկեղեցւոյն,
առաջարկել համօրէն հաւատացելոց ի դաւանել և ի պահպա-
նել ըստ վաղնջուց և հաստատուն հաւատոյ ընդհանրական
Եկեղեցւոյ, այլև հերքել և դատապարտ առնել զհակառակ
մոլորութիւնսն վնասակարս տերունական հօտին։

ԳԼՈՒԽ Ա։ — Յաղագս առաքելական առաջնորդութեան
սրբոյ յանձին Երանելւոյն Պետրոսի։ — Վասնորոյ ուսուցանեմք և
յայտ առնեմք՝ ըստ աւետարանին վկայութեան, թէ առաջ-
նութիւն իրաւասութեան ի բովանդակ Եկեղեցւոջ Աստուծոյ
անմիջապէս և ուղղակի խոստացեալ և շնորհեալ է ի Քրիս-
տոսէ Տեառնէ մերմէ երանելւոյն Պետրոսի առաքելւոյ։ Քանզի
առ Սիմոն միայն՝ որում ասացեալ էր, Դու կոչեսցիս Կե-
փաս, յետ նորա զխոստովանութիւն դաւանութեանն տալոյ՝
թէ Դու ես Քրիստոսն Որդի Աստուծոյ կենդանւոյ, ասաց Տէր.
Երանի՞ քեզ Սիմոն, որդի Յովնանու, զի մարմին և արիւն
ոչ յայտնեաց քեզ, այլ Հայրն իմ որ յերկինս է. և ես
քեզ ասեմ, զի դու ես վէմ (կամ Պետրոս), և ի վերայ
այդր վիմի շինեցից զԵկեղեցի իմ, և դրունք դժոխոց զնա մի՛
յաղթահարեսցեն. և տաց քեզ զփականս արքայութեան
երկնից. և զոր միանգամ կապեսցես յերկրի՝ եղեցի կապեալ
յերկինս, և զոր միանգամ արձակեսցես յերկրի՝ եղեցի ար-
ձակեալ յերկինս (Մատթ. ԺԶ, 18. 19)։ Այլև Սիմոնի
Պետրոսի շնորհեաց Յիսուս յետ Յարութեան իւրոյ զգերագոյն
հովուի և կառավարչի զիրաւասութիւն ի վերայ համօրէն
հօտին իւրոյ՝ ասելով. արածեա զգառինս իմ. արածեա զոչ-

խարս իմ (Յովհ. ԻԱ. 15, 17)։ Այսմ բացայայտ վկայութեան զրոցն սրբոց, որպէս ցանգ իմացեալ է կաթուղիկէ Եկեղեցի, հակառակին խեղաթիւր կարծիք այնոցիկ՝ որք ըզկարգեալն ի Քրիստոսէ Տեառնէ մերմէ յԵկեղեցւոջ իւրում զձև վարչութեան խանգարելով՝ ասեն թէ Պետրոս միայն ոչ է ճոխացեալ ի Քրիստոսէ առաւել քան զայլ առաքեալսն, ոչ քան զմի մի ի նոցանէ և ոչ քան զամենեսին միանգամայն՝ ստոյգ և սեպհական իրաւասութեան առաջնութեամբ. Նմանապէս որք պնդեն թէ այն առաջնութիւն ոչ անմիջապէս և ուղղակի նմին երանելւոյն Պետրոսի անկ է, այլ Եկեղեցւոյ պարգևեալ, և ի ձեռն նորին աւանդեալ է Պետրոսի՝ իբրև Եկեղեցւոյ պաշտօնեի։

Վասն որոյ եթէ ոք ասիցէ, թէ երանելի առաքեալն Պետրոս ոչ է կարգեալ ի Քրիստոսէ Տեառնէ մերմէ իշխան ամենայն առաքելոց և գլուխ համօրէն զինուորեալս Եկեղեցւոյ, կամ թէ նա զպատիւ և եթ՝ և ոչ զառաջնութիւն ստոյգ և յատկական իրաւասութեան ի նմին իսկ ի Տեառնէ մերմէ Յիսուսէ Քրիստոսէ ուղղակի և անմիջապէս ընկալեալ է, նզովեալ եղիցի։

ԳԼՈՒԽ Բ. — Յաղագս մշտնջենաւորելոյ աթոռոյ Պետրոսի ի Հռոմայեցս։ — Իսկ զոր ինչ յանձին երանելւոյն Պետրոսի առաքելոյ կարգեաց եղ Հովուապետն ոչխարաց Տէր մեր Յիսուս Քրիստոս՝ ի մշտնջենաւոր փրկութիւն և ի յարատև օգուտ Եկեղեցւոյ, հարկ է այնմ ի ձեռն նորին Տեառն յԵկեղեցւոջ հիմնելոյ ի վերայ վիմի մինչև ի կատարած աշխարհի հաստատուն մնալ։ Քանզի և ոչ ոք երկբայի, այլ ընդ ամենայն ժամանակս ծանօթ լեալ է ամենեցուն, զի սուրբն և երանելին Պետրոս պետն առաքելոց և գլուխ, սիւն հաւատոյ և հիմն կաթողիկէ Եկեղեցւոյ, որ ի Տեառնէ մերմէ Յիսուսէ Քրիստոսէ և ի Փրկչէ մարդկայինս ազգի և ի կենցուցչէ՝ զփականս արքայութեան ընկալաւ, մինչև ցայժմ և ցանգ ի յաջորդս իւր՝ յեպիսկոպոսունս սրբոյ Աթոռոյն Հռոմայ հիմնելոյ յիւրմէ և իւրով արեամբն սրբեցելոյ՝ կենդանի է,

և գերագահ բազմի, և դատաստանս առնէ։ Վասն որոյ որ ոք յաջորդիցէ յԱթոռս յայս Պետրոսի, նա ըստ կարգադրութեան Նորին իսկ Քրիստոսի ընդունի զառաջնութիւնն (զգերագահութիւն) Պետրոսի ի վերայ ընդհանրական Եկեղեցւոյ, քանզի յարատեւակ է ճշմարտութեանն կարգադրութիւն, և երանելին Պետրոս յընկալեալ պնդութեան վիմին կալով և մնալով՝ զառեալն զեկավարութիւն Եկեղեցւոյ ոչ թողու երբէք։ Սմին իրի առ Հռովմէականն Եկեղեցի՝ ի պատճառս հզօրագոյն պետականութեանն հարկ եղեալ էր միշտ համօրէն Եկեղեցւոյ գալ ժողովել, այս ինքն է զի հաւատացեալք ամենայն աշխարհաց յայն Աթոռ՝ յորմէ իրաւունք պետական հեղինակութեան յամենեսեան գետահետին՝ իբրև անդամք ի գլուխ անդր զուգաւորեալք՝ ի մի միաբանութիւն մարմնոյ յարեսցին։

Ապա ուրեմն եթէ ոք ասիցէ՝ թէ ոչ ի Նմին իսկ ի Քրիստոսի Տեառն մերոյ կարգադրութենէ, կամ յԱստուածային իրաւանց է ունելն երանելւոյն Պետրոսի յառաջնութեան (կամ ի նախագահութեան) ի վերայ ընդհանրական Եկեղեցւոյ յաջորդս մշտնջենաւորս, կամ թէ քահանայապետն Հռովմայ ոչ իցէ յաջորդ երանելւոյն Պետրոսի յայնմ առաջնութեան, նզովեալ եղիցի։

ԳԼՈՒԽ Գ. — Յաղագս զշրջանեան և պարտաւոր ցերագոհանեան քահանայապետին Հռովմայ։ — Որոյ վասն՝ յեցեալք ի բացայայտ վկայութիւնս զրոցն սրբոց և յարեալք ի յստակ վճիռս նախորդացն մերոց քահանայապետաց Հռովմայ, որպէս և տիեզերական ժողովոց, կրկնեմք զսահման տիեզերական ժողովոյն Փլորենտիոյ, ըստ որում ամենայն հաւատացեալք Քրիստոսի պարտին հաւատալ՝ թէ սուրբ Աթոռն առաքելական և քահանայապետն Հռովմայ ընդ ամենայն տիեզերս ունի զառաջնութիւն, և թէ նա ինքն քահանայապետն Հռովմայ յաջորդ է երանելւոյն Պետրոսի առաքելոցն պետի, և ճշմարիտ փոխանորդ Քրիստոսի, և գլուխ համօրէն Եկեղեցւոյ, և քրիստոնէից ամենեցուն հայր և վարդապետ, և

նմա՝ յանձին երանելւոյն Պետրոսի՝ առանդեալ է ի Տեառնէ մերմէ Յիսուսէ Քրիստոսէ լիակատար իշխանութիւն հովուելոյ, տնտեսելոյ և ղեկավարելոյ զընդհանրականն Եկեղեցի, զոր օրինակ և ի գործս տիեզերականացն Ժողովոց և ի կանոնսն սուրբս դրոշմեալ կայ։

Յաղագս այսորիկ ուսուցանեմք և յայտ առնեմք, զի հռովմէականն Եկեղեցի ըստ կարգադրութեանն Աստուծոյ ընկալեալ ունի ըստ սովորական իշխանութեան գլխաւորութիւն ի վերայ այլոցն ամենեցուն, և թէ այս իշխանութիւն իրաւասութեան քահանայապետին Հռովմայ, որ է Ճշմարտիւ եպիսկոպոսական, անմիջական է. առ որ հովիւքն և հաւատացեալք որոց և իցէ արարողութեանց և աստիճանաց, եթէ մէն մի իւրաքանչիւր և եթէ ամենեքեան միանգամայն, ըստ պատշաճի եկեղեցական դասակարգութեան և կատարեալ հնազանդութեան՝ պարտաւորին դիմել, ոչ միայն ի դէպս խնդրոց հաւատոյ և վարուց, այլև յայնոսիկ որք անկ են բարեկարգութեան և կառավարութեան Եկեղեցւոյ ընդ ամենայն աշխարհս սփռելոյ. այնպէս զի պահելով ընդ քահանայապետին Հռովմայ թէ զմիութիւն հաղորդակցութեան և թէ զմիութիւն դաւանութեան նոյն հաւատոց, Եկեղեցին Քրիստոսի իցէ մի հօտ և մի հովիւ։ Այս է վարդապետութիւն կաթուղիկէ հաւատոյ, յորմէ անհնար է ումեք խոտորել և չանկանել ի հաւատոց և ի փրկութենէ հոգւոյ։

Այս իշխանութիւն ծայրագոյն քահանայապետին ոչ ինչ բնաւ ստանէ այնմ՝ սովորական և անընդմէջ իշխանութեան եպիսկոպոսութեան, որով եպիսկոպոսունքն որք ի Հոգւոյն սրբոյ կարգեալք յաջորդք են առաքելոց՝ իբրև Ճշմարիտ հովիւք զհօտսն աւանդեալս ինքեանց և զմի մի իւրաքանչիւր հովուեն և կառավարեն. քանզի զսոյն հաստատէ, զօրացուցանէ և պահանջէ Հովիւն գերագոյն և ընդհանրական, որպէս և սուրբն մեծն Գրիգոր ասէ. Իմն պատիւ՝ է պատիւ ընդհանրական Եկեղեցւոյ. իմն պատիւ է եղբարցն իմոց անվկանդն զօրութիւն. յայնժամ ես Ճշմարտապէս պատուեալ գտանիմ՝

յորժամ ոչ զլասցի զք իւրաքանչիւր նոցա զպատշաճականն պատիւ։

Ի զերագոյն իշխանութենէ անտի զոր ունի քահանայապետն Հռովմայ՝ զեկավարելոյ զԵկեղեցին ընդհանրական, յառաջ դան իրաւունք նորին ազատօրէն հաղորդակցելոյ ի կատարման անդ իւրոյ պաշտաման ընդ հովուաց և ընդ հօտից համօրէն Եկեղեցւոյ, այնպէս զի մարթասցին նոքա ընդունել ի նմանէ ի ճանապարհի փրկութեան զկարգ և զղեկավարութիւն։ Վասն որոյ դատապարտեմք և հերքեմք զկարծիս այնոցիկ՝ որք ասեն թէ օրէն է արգելուլ զայս հաղորդակցութիւն ծայրագունի զլխոյն ընդ հովուացն և ընդ հօտից, կամ՝ թէ համարեն զայն վնասակար աշխարհական իշխանութեան. այլ և պնդեն՝ թէ որ ինչ միանգամ՝ յառաքելական Աթոռոյ աստի կամ սորին հրամանաւն սահմանիցի ի զեկավարութիւն Եկեղեցւոյ՝ ոչ ունի զոյժ և զզօրութիւն, եթէ չառնուցու հաստատութիւն ի հաճոյից աշխարհական իշխանութեան։

Եւ քանզի քահանայապետն Հռովմայ Աստուածային իրաւամբ առաքելական առաջնութեան զլուխ է ընդհանրական Եկեղեցւոյ, ուսուցանեմք և հրատարակեմք՝ թէ նա ինքն է զերագոյն դատաւոր հաւատացելոց, և յամենայն դէպս Եկեղեցական քննութեան օրէն է զիմել առ նորին դատաստան. իսկ զդատաստան առաքելական Աթոռոյն՝ քան զոր չէք իշխանութիւն վեհագոյն՝ ոչ ոք կարէ մերժել, և ոչ ումեք օրէն է առնել դատաստան զդատողութենէ նորա։ Վասն որոյ մեր զորին յուղիղ պողոտայէ ճշմարտութեան որք ասեն՝ թէ օրէն է բողոք ունել զդատաստանաց քահանայապետացն Հռովմայ ի ծողով տիեզերական՝ իբրև յիշխանութիւն վերագոյն քան զՀռովմայ քահանայապետին։

Սմին իրի եթէ զք ասիցէ՝ թէ քահանայապետն Հռովմայ ունի միայն զպաշտօն տեսչութեան կամ՝ զեկավարութեան, բայց ոչ զլիուլի և զծայրագոյն իշխանութիւն իրաւասութեան յընդհանրական Եկեղեցւոջ՝ ոչ միայն ի խնդիրս վերաբերեալ հաւատոց և վարուց, այլև ի վերաբերեալն առ բարեկար-

գութիւն և կառավարութիւն Եկեղեցւոյ սփռելոյ ընդ ամենայն երկիր, կամ թէ ունի նա զմեծագոյն մասն և եթ, և ոչ զլի կատարեալ իշխանութիւնս զայս ծայրագոյն, կամ թէ այս իշխանութիւն նորա ոչ է սովորական և անմիջական, կամ ոչ ի վերայ ամենայն Եկեղեցեաց և ի վերայ միոյ միոյ ի նոցանէ, կամ ոչ ի վերայ ամենայն հովուաց և հաւատացելոց և ի վերայ իւրաքանչիւրոց նոցա, նզովեալ եղիցի։

ԳԼՈՒԽ Դ. — Յաղագս անսխալ վարդապետութեան քահանայապետին Հռովմայ։ — Ի նմին իսկ յառաքելական առաջնութեան, զոր քահանայապետն Հռովմայ իբրև յաջորդ առաքելապատին Պետրոսի յընդհանրական Եկեղեցւոջ ընկալեալ ունի, բովանդակի և գերագոյն իշխանութիւն վարդապետութեան. և զայս այսպէս վարկուցեալ է ցանգ Աթոռն սուրբ. զսոյն հաստատէ յարատև սովորութիւնն Եկեղեցւոյ, և նոքին իսկ Ծողովքն տիեզերականք, մանաւանդ այնոքիկ՝ յորս Արևելք ընդ արևմտից ի միութիւն հաւատոյ և սիրոյ միաբան էին՝ յայտ յանդիման քարոզեցին։ Քանզի Հարքն չորրորդի Ծողովոյն Կոստանդնուպօլսոյ՝ զհետ գնալով նախնեացն շաւղաց, զայս հանդիսական հրատարակեցին դաւանութիւն՝ թէ առաջին փրկութիւն է զուղիղ հաւատոյ զկանոնն պահպանել, և քանզի ոչ է մարթ զանց առնել զվճռով Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի, որ ասէ, Դու ես վէմ, և ի վերայ այդր վիմի շինեցից զԵկեղեցի իմ, հաստատին ասացեալքդ և յարդեանց իրացն. քանզի յԱթոռն առաքելական միշտ անարատ պահեցաւ հաւատն կաթողիկէ, և քարոզեցաւ սրբազանն վարդապետութիւն։ Վասն որոյ ի սորա հաւատոյն և ի վարդապետութենէն չկամելով անջատել երբէք, յուսամք թէ ի միումն հաղորդակցութեան զոր Աթոռն առաքելական քարոզէ՝ արժանաւորք եղիցուք գտանիլ, յորում է անթերի և ճշմարիտ հաստատութիւն Քրիստոսական կրօնից։ Այլև հաւանութեամբ երկրորդի Ծողովոյն Լուգդունի դաւանեցին Ցոյնք՝ թէ սուրբ Եկեղեցին հռովմէական զծայրագոյն և զլիակատար առաջնութիւն և զգլխաւորութիւն առեալ է ի

վերայ համբէն կաթուղիկէ Եկեղեցւոյ. զոր և խոստովանի ստուգութեամբ և խոնարհութեամբ՝ ընկալեալ զոլ ի Նմին իսկ ի Տեառնէ՝ յանձին երանելւոյն Պետրոսի գլխաւորի առաքելոցն, որոյ յաջորդ է քահանայապետն Հռովմայ հանդերձ լիուլի իշխանութեամբ. և զոր օրինակ նա առաւել քան զայլսն պարտական է պաշտպան կալ ճշմարտութեան հաւատոյ, նոյնպէս և՝ եթէ երբէք ծագեսցին խնդիրք ինչ զհաւատոց, նորա դատաստանաւն պարտին ընդունել զվճիռ։ Դարձեալ և Փլորենդեանն Ժողով սահմանեաց՝ թէ քահանայապետն Հռովմայ ճշմարիտ փոխանորդ է Քրիստոսի, և զլուխ համօրէն Եկեղեցւոյ, և ամենայն քրիստոնէից հայր և վարդապետ, և նմա աւանդեալ է ի Տեառնէ մերմէ Յիսուսէ Քրիստոսէ՝ յանձին երանելւոյն Պետրոսի՝ լիակատար իշխանութիւն հովուելոյ, տնտեսելոյ և ղեկավարելոյ զԵկեղեցին ընդհանրական։

Այսմ՝ հովուական պաշտաման կատարողս լինել կամելով՝ նախորդքն մեր զանխոնջ աշխատութիւն յանձին կալան հանապազ, զի փրկարար վարդապետութիւնն Քրիստոսի առ ամենայն ժողովուրդս երկրի տարածեսցի, և արթուն հսկողութեամբ գուն գործեցին՝ զի ուր և ընկալեալ իցէ այն՝ անխառն և անարատ պահեսցի։ Որոյ վասն վերադիտողքն համօրէն աշխարհի՝ թէ առանձինն և թէ ի Ժողով հաւաքեալք՝ զհետ երթալով երկայն ժամանակեայ սովորութեան Եկեղեցւոյ և վաղնջուցն կանոնի, առաւելապէս զայնոսիկ ի վտանգս որք ի խնդիրս հաւատոյ ի վեր երևէին՝ յայս առաքելական Աթոռ մատուցին, զի անդ մանաւանդ կարճեսցին վնասքն հաւատոյ՝ ուրանօր չկարէ երբեք հաւատն պակասել։ Այլ և քահանայապետքն Հռովմայ՝ ըստ իւրաքանչիւր ժամանակացն և իրացն հանգամանաց պահանջկոց՝ մերթ ժողովս տիեզերական կազմելով, կամ՝ զկարծիս Եկեղեցւոյ սփռելոյ ընդ տիեզերս ընդունելով, մերթ ի ձեռն մասնական ժողովոց, մերթ և այլով ինչ նպաստիւք՝ զորս Աստուածային մատակարարեր նախախնամութիւն, սահմանեցին պինդ ունել զայն ինչ իրս՝ զորս օգնականութեամբն Աստուծոյ ճանաչէին համաձայնս

ենել դրոց սրբոց և առաքելական աւանդութեանց։ Քանզի և ոչ խոստացեալ է Հոգին սուրբ յաջորդացն Պետրոսի՝ զի նորին յայտնութեամբն նոր ինչ վարդապետութիւն ի դուրս բերիցեն, այլ զի նորա օժանդակելովն՝ զյայտնութիւնն աւանդեալ ի ձեռն առաքելոց կամ՝ զաւանդն հաւատոյ՝ սրբութեամբ պահեսցեն և հաւատարմութեամբ բացատրեսցեն։ Զորոց և զառաքելականն վարդապետութիւն ամենայն Հարք պատուականք ընկալեալ, և սուրբ վարդապետքն ուղղափառք մեծարեալ և այնմ հետևեալ են, քաջ գիտելով զի Աթոռս այս սրբոյն Պետրոսի անարատ մնացեալ է ցանգ յամենայն մոլորութեանց ըստ Աստուածային խոստման Տեառն մերոյ և Փրկչին առ գլուխն աշակերտաց իւրոց՝ թէ Ես աղաչեցի զՀայր վասն քոյ, զի մի՛ պակասեսցին հաւատք քո. և դու երբեմն դարձցիս և հաստատեսցես զեղբարս քո (Ղուկ. ԻԴ. 32)։

Եւ արդ այս ճշմարտութեան և անպակասելի հաւատոյ շնորհ Աստուածուստ պարգևեալ է Պետրոսի և որոց յաջորդեն նմա յաթոռս յայս, որպէս զի զգերազոյն պաշտօն իւրեանց ի գործ դնիցեն ի փրկութիւն ամենեցուն, և զի համօրէն հօտն Քրիստոսի ի ձեռն նոցա պատսպարեալ ի թունալից հրապուրանաց մոլորութեան, երկնայնոյ վարդապետին Ճարակաւն սնանիցի, և զի բարձմամբ պատճառաց հերձուածոյ՝ Եկեղեցին ողջոյն ի միութեան պահեսցի, և հաստատեալ ի վերայ հիմանն իւրոյ՝ ի դրանց դժոխոց անվանելի մնասցէ։

Եւ քանզի ի սմին յայսմ ժամանակի, յորում մեծապէս կարօտութիւն է առաքելական պաշտամանս փրկաւէտն զօրութեան, ոչ սակաւք գտանին՝ որք հակառակ կան սորա իշխանութեանն, կարևոր յոյժ համարիմք հանդիսաւոր եղանակաւ հռչակել զարտօնութիւնն՝ զոր Միածին Որդին Աստուծոյ հաճեցաւ լծորդել ընդ ծայրագունին հովուական պաշտման։

Վասն որոյ Մեք՝ հաւատարմութեան յեցեալք յաւանդութիւնն ընկալեալ անդստին ի սկզբանէ Քրիստոսական կրօնից, ի փառս Աստուծոյ Փրկչին մերոյ, ի պայծառութիւն

կանթուղիկէ հաւատոյ, և ի փրկութիւն ժողովրդոց քրիստոնէից, հաւանութեամբ սրբազան ժողովոյս ուսուցանեմք և սահմանեմք՝ թէ մասն է հաւատոյ յայտնեալ առ ի Աստուծոյ, զի քահանայապետն Հռովմայ յորժամ յանթոռոյ խօսիցի, այս ինքն է յորժամ ի գործ դնելով զպաշտօն հովուի և վարդապետի ամենայն քրիստոնէից՝ իւրովն գերագոյն առաքելական իշխանութեամբ սահմանիցէ զվարդապետութիւն ինչ զհաւատոյ կամ զվարուց՝ իբրև զընդունելի ընդհանրական Եկեղեցւոյ, օգնականութեամբն Աստուծոյ խոստացեալով նմա յանձին երանելւոյն Պետրոսի՝ զնոյն ունի անսխալականութիւն զոր կամեցաւ Փրկիչն ունել Եկեղեցւոյ իւրում ի սահմանել զվարդապետութիւնս հաւատոյ և զվարուց բարեաց, և թէ յաղագս այսորիկ այնպիսի սահմանք քահանայապետին Հռովմայ անայլայլակք են ըստ ինքեանց, և ոչ թէ ի հաւանութենէ Եկեղեցւոյ։

Եւ եթէ ոք մերումս այսմ սահմանի հակառակել յանդգնիցի, զոր Տէր մի՛ արասցէ, նզովեալ եղիցի *)։

(*) Ընդքեր կանոնակիցք՝ քաջ ի վիայոՒնեանց սրբոյ Ա-եպոսրանէն նշանակելոց և ի ՆերքմանուՒնեան ապ՝ ոանի և այլ ևս լրբեր-պասան վիայուՒնեանս ի Հարց և ի Յոդովոց և ի պապէն Հռովմայ, և այն ինքնա մասամբ այլանոնեալս և բռնադրեալս, որպէս տեսցի և յարաՒչնկայ հերետման հօրն Կիրեի. և զի ազգեր-ր վիայուՒնեանցն այնոցիկ առհասարակ են ի Լատին լեզու, աւելորդ համարեցաւ ի մեջ բերել և զնոսին ի հայերէն ՆերքմանուՒնեան մերոմ։

ԹՈՒՂԹ ԱՌ ՊԻՈՍ Թ.

Ցաղագս կանոնական նամակին նորա, որոյ սկիզբն է Հովհան յաչխտենական։

Սրբազան Հայր

Առ Ձերդ սրբութիւն զրկել առեալ, ընդոյն տամ ձեզ անուն պատուոյ՝ զոր և ձերդ Եկեղեցի շնորհէ։ և ոչ հետաքննեմ՝ արժանաւո՞ր իցէք այնմ՝ թէ ոչ։ Քանզի և սովորութիւն էր ի նախնումն Եկեղեցւոջ սուրբս կոչել զմիմեանս, ոչ եթէ յափշտակել կամելով զպատիւն որ անկ է Աստուծոյ միայնոյ, այլ զի յուշ լիցի ամենայն ումեք՝ թէ հարկ ի վերայ կայ ջան ի գործ արկանել արժանի այնմ լինելոյ ըստ կարի։ Ապա սեպհականեցաւ սրբազանդ անուն եպիսկոպոսաց, և հուսկ ի վերջէ պատրիարքաց։

Նախորդքն Ձեր ընկալան յառաջնոց անտի տիեզերական ժողովոց զկոչումս առաջին եպիսկոպոս Եկեղեցւոյ, իբր զի աթոռն ձեր գտանէր յառաջնուն Մայրաքաղաքի այնր ժամանակի կայսերութեան. և զայս առաջնութիւն պատուոյ և եկեղեցական իրաւանց ոչ զլանայր արդեօք ձեզ և ոչ մին յառաքելական եկեղեցեաց, եթէ այնու շատանայիք՝ որով ամենայն եկեղեցիք առաքելականք անուանէին զձեզ նախկին պարբերութ, և հաստատուն սովորութեամբ անուանքս պատուոյ՝ սրբազանին և սրբազան հայր ձեզ անկ լինէին օրինաւորապէս, ոչ ինչ հայելով յաստիճան անձնական սրբութեան ձերոյ։

Եւ իցէք դուք արդեօք արժանի կոչմանցդ այդոցիկ՝ յորմէ հետէ անկայքն ի հերձուած, և ընդ ձեզ արկիք ի նոյն զմի մասն Եկեղեցւոյ։ Ես ոչ կարծեմ։ Այլ քանզի Եկեղեցիքն ճշմարտապէս կաթուղիկեայք և առաքելականք ոչ դատեցին զձեզ, և ոչ դատապարտ արարին ցայսօր՝ զէթ պաշտօնական եղանակաւ, ոչ ունիմ ես իրաւունս համարելոյ զձեզ անկեալ ընդ կանոնական դատավճռով. վասն որոյ և կարող եմ համարել զձեզ իբրև զմի ի հայրապետաց Եկեղեցւոյ և տալ ձեզ զզուշութեամբ զանուանն պատուոյ՝ որ անմեկին է ի ձերմէ պաշտամանէդ, մանաւանդ մինչ ուղղակի ընդ ձեզ խօսիցիմ։

Կամ է ինձ, Սրբազան Հայր, ի թղթիս յայսմիկ զոր համարձակիմս գրել առ ձեզ, ի քննին առնուլ զնամակն կանոնական հրատարակեալ առ ի ձէնջ յաղագս գերագոյն քահանայապետութեան, զոր ընծայէք անձին ձերում, և յաղագս ծագման և արտօնութեանցն զորս համարիք թէ ունիցի քահանայապետութիւնն այն. և զայս քննութիւն արարից ես անդորր ոգւով, և ըստ պատշաճի վայելչութեան։ Եթէ ներեալ իցէ ինձ ակն ունել՝ թէ թուղթս այս անկանելով անկցի ընդ ակամբ ձերով, աղաչեմ ընթեռնուլ զսա աղատութեամբ անկեղծ և անկողմնասէր խղճի մտաց։ Եւ միթէ ոչ իցէ հընար ձեզ ի բաց դնել՝ զէթ առ սակաւ մի ժամանակ՝ զմեծապանծ խորհուրդսն զորս արք շողոմարարք տան ձեզ անդադար զտեղւոյն և զաստիճանէն զոր ունիք յԵկեղեցւոջ, և վերծանել իրրև զմի ոք ի մահկանացուաց զոր ինչ գրէ առ ձեզ քահանայ ոմն անձնանուէր օգտից Եկեղեցւոյ, որ անցուցեալ է զկեանս իւր յուսումն վարդապետութեան աւանդելոյ մեզ ի Հարցն սրբոց ըստ առաքելական քարոզութեանց։

Եթէ ձեզ անհնար իցէ, Սրբազան Հայր, ճողոպրել զանձն ձեր յազդեցութեանց անտի որ շուրջ պատեալ են զձեօք, և նուիրել վայրկեանս քանի մի ի հետազօտութիւն ճշմարտութեան, արդահատեմ ես ի ձեզ յամենայն սրտէ իմմէ, և երկնչիմ ի դատաստանէ անտի՝ զոր անձամբ յանձն ձգէք դուք։ Իցէ այն որպէս և է, այլ ես կատարեցից զպար-

տրս իմ. և չէ ինչ ինձ փոյթ՝ եթէ լուիցէք ինձ և կամ ոչ։ Քանզի հրատարակելով զԹուղթս զայս՝ ոչ միայն ընդ Ձեռում սրբութեանդ խօսիմ ես, այլ և ընդ ամենեսեան զորս Նամակն Ձեր խաբեաց կամ խաբեսցէ։ Եթէ կարողացայց ես լուսաւորել զմի զբ միայն յեղբարց իմոց մոլորելոց, վաստակն իմ ոչ եղիցի ի կորուստ, և համարեցայց ընկալեալ զվարձ աշխատութեան իմոյ։

Ա.

Ցառաջ քան զամենայն առից ի քննութիւն զանուանս պատուոյ զոր եգեալ է.ք ի գլուխ Նամակին ձերոյ, Պիսս էպիսկոպոս։ Այդ իսկ է տիտղոսն օրինաւոր՝ որ միայն անկ է ձեզ յաստուածային իրաւանց՝ զօրութեամբ ձեռնադրութեանն զոր ընկալայք, և հիմն է այլոցն ամենեցուն տիտղոսից զորս ունիցիք յանձին։ Եպիսկոպոս է.ք դուք, այս ինքն է մի յեպիսկոպոսաց Եկեղեցւոյ կամ յեպիսկոպոսութենէ անտի. և քանիցն իցէ, Սրբազան Հայր, եպիսկոպոսութիւնն յԵկեղեցւոջ։ Աւանդութիւնն ողջոյն ասէ մեզ աւանիկ բերանով մեծի եպիսկոպոսին Կարթագինեայ, Կիպրիանոսի ասեմ, թէ մի է եպիսկոպոսութիւնն, և ամենայն եպիսկոպոսունք զնոյն ստացեալ ունին ընկերաբար։ Եթէ դուք ոչ զնոյն եպիսկոպոսութիւն ունիցիք՝ զոր և այլք յեպիսկոպոսաց անտի, և եթէ ընկերաբար ընդ նոսին կամ կցորդաբար ստացեալ ունիցիք զայն ընդ այլոցն եպիսկոպոսաց, զիաՀրդ իշխիցէ.ք զլուխ այլոցն զանձն ձեր համարել։ Զիարդ վարկանիցիք զնոսա իբրու լոկ փոխանորդս ձեր կամ նուիրակս. զիաՀրդ իշխէ.ք զլանալ անդամ նոցա զիրաւունս զատաստան առնելոյ զիրաց հաւատոյ, և.ս և ընդ ձեզ ի միասին։ Այլ ասիցէ.ք. ես յաստուածային իրաւանց առեալ ունիմ արտօնութիւնս բաղումս, և զօրութեամբ կամացն Աստուծոյ աղբիւր եմ եպիսկոպոսական իշխանութեան։ Եթէ այդպէս իցէ, դուք միայն ունիք ար-

դեամբք զեպիսկոպոսութիւն յԱստուածային իրաւանց, իսկ այլքն առ ի ձէնջ պատգամաւորին. և զիարդ ապա կարող էր ասել Նախնականն Եկեղեցի ընդ սրբոյն Կիպրիանոսի՝ թէ Եպիսկոպոսութիւնն մի է, և ամենայն եպիսկոպոսունք զնոյն ունին իշխանութիւն կցորդաբար։ Զիարդ իցէ զի երանելին Հերոնիմոս զայսմանէ վարդապետելով ասէ՝ թէ Եպիսկոպոս ոք փոքրագունին անգամ ի քաղաքս, որպիսի է՝ օրինակի աղագաւ՝ Եւզուբայն, զնոյն ունի իրաւունս և զնոյն արտօնութիւնս զորս և եպիսկոպոսունք մեծացն աթոռոց, ընդ որս և Հռովմայն։ Եթէ դուք աղբիւր իցէք եպիսկոպոսութեան, ուրեմն տիեզերական եպիսկոպոս իցէք. և միթէ ոչ ուսայք ի մեծէ եպիսկոպոսէն Հռովմայ, ի Գրիգորէ ասեմ մեծէ, թէ որ ոք հետամուտ իցէ այսմ անուանակոչութեան պէնէրական եպիսկոպոսի, նման է արուսեկին, որ ընդողնէր զաթոռն Աստուծոյ. և փառասիրութիւն նորա ձգտի ի կողոպտել զեղբարս իւր յեպիսկոպոսութենէ իւրեանց։ Եւ դուք տիեզերական եպիսկոպոս համարիք զանձն ձեր, ոչ ինչ հոգալով ըղձանթաձիգ նղովից երանելւոյն Գրիգորի և համօրէն նախնական Եկեղեցւոյն՝ յորոյ ի դիմացն խօսէր նա։

Անունդ եպիսկոպոս զոր յանձին բերէք՝ կրկնակի առնէ զձեզ դատապարտ. նախ այնու՝ զի յուշ առնէ զմեծ խորհուրդ միութեան եպիսկոպոսութեանն, որ հիմն է ճշմարիտ սահմանադրութեան Եկեղեցւոյ. և երկրորդ այնու՝ զի առնուք զայն հանրական իմն եղանակաւ՝ առ ի ցուցանելոյ թէ եպիսկոպոս իցէք տիեզերական, այս ինքն է, որպէս մեծն Գրիգոր ասէ, նմանող և նախանձաւոր արուսեկին։ Եւ ընդէր պարզապէս եպիսկոպոս զանձն կոչիցէք. քանզի չիք եպիսկոպոս ոք ընդհանրապէս, այլ ամենայն եպիսկոպոս պարտի ունել զաթոռ իւր. և զի՞ է զի չանուանէք զանձն ձեր էպիսկոպոս Հռովմայ, որովհետև Հռովմ է աթոռ եպիսկոպոսութեան ձերոյ։ Բայց ոչ այնպէս՝ զի համարիք թէ եպիսկոպոս իցէք՝ բացարձակ նշանակութեամբ ձայնիդ, իբրու եպիսկոպոս համօրէն Եկեղեցւոյ, աղբիւր ամենայն իշխանութեան, ամենայն եպիս-

կոպոսական իրաւասութեան, լրումն և բովանդակութիւն եպիսկոպոսութեան և Եկեղեցւոյ։

Փառասիրութիւն այսպիսի ոչ ապաքէն ընդ ցնորս մոլորութեան իցէ դասելի։

Առ այսքանեաւ ամբարտաւանութեամբ տես ինձ և ձև մի խոնարհութեան. Ծառայ ծառայից Աստուծոյ։ Ցաւուրց անտի Գրիգորի մեծի եպիսկոպոսունք Հռովմայ զձևդ զայդ առնուն ի կիր։ Գրիգոր զայդ անուն ընկալաւ ի ժամանակին՝ յորում բարեպաշտ կայսրն Մօրիկ ընծայէր զտիտղոսն պէպէրական եպիսկոպոսին Կոստանդնուպօլսոյ։ Զիք երկբայութիւն զի Մօրիկ ընդ միտ անդամ չածէր՝ թէ քանի՞ մոլորութիւնք դտանին յայդմ ասացուածի։ Քանզի Կոստանդնուպօլիս լեալ էր բնիկ մայրաքաղաք հռովմէական կայսերութեան, կենդրոն կառավարութեան և բովանդակ տեսչութեան աշխարհին, համարեցաւ նա՝ թէ վասն հասարակաց օգտի Եկեղեցւոյ հարկ իցէ կազմել կենդրոն ինչ ներգործութեան, և թէ կենդրոնն այն ոչ այլուր մարթի հաստատել՝ եթէ ոչ ի քաղաքին, ուստի քաղաքականն վարչութիւն շարժումն տայր ողջոյն իսկ կայսերութեան։ Անուանդ պէպէրական յաչս կայսերն բարեպաշտի ոչ այլ ինչ էր՝ եթէ ոչ նշանակ իրաւասութեան այնպիսւոյ որ ի գործ դնելոց էր կցորդութեամբ ամենայն եպիսկոպոսաց միանդամայն, և այն՝ հաստատութեամբ և հաւանութեամբ Եկեղեցւոյ։ Մեծն Գրիգոր սաստկապէս ընդդէմ կքրեցաւ այնմ՝ անուանակոչութեան. ի վեր եհան զմոլորութիւնսն ծածկեալս ընդ այնու ձևով, և ոչ միայն չպահանջեաց զայն վասն անձին և վասն աթոռոյն իւրոյ, այլև յորդորեաց զայլ պատրիարքսն, այս ինքն է զԱնտիոքայն և զԱղեքսանդրուն, բողոքարկու լինել զայնմանէ իբրև զահագին ոճրագործութենէ ընդդէմ եպիսկոպոսութեանն ողջոյն։

Պատրիարքսն Կոստանդնուպօլսոյ յայնմ հետէ և անդր ի վար արկին զտիտղոսն զայն. բայց յաչս նոցա ոչ աւելի ինչ կարևորութիւն ունէր այն քան զայլ անհամար ճոխաբանութիւնսն՝ որ սովորական իմն են արևելեայց, և ոչ ունին նշա-

նակութիւն և ոչ մի։ Իսկ Հռովմայ եպիսկոպոսունքն ոչ զտան նմանողք նախորդին իւրեանց Գրիգորի։ Մի ոմն ի նոցանէ խնդրեաց յանօրէն և յանազորոյն կայսերէն Փոկայ, որ սպանն զՄՕրիկ, զտիտղոսդ Տէրէրական, և չէ յայտ թէ ընկալեաւ ի նէ զայն. իսկ յաջորդք նորա դաւաճանեցին և ս զկայսերս Հռովմայեցւոց՝ որ թագաւորէին ի Կոստանդնուպօլիս, և պսակեցին կայսր Հռովմայեցւոց յարևմուտս զմեծն Կարոլոս, և յափշտակեցին արտօնութիւնս բաղումս, ընդ որս և զտիտղոս տիեզերական եպիսկոպոսի։ Եւ ահա յետ իբր հազարամեայ ծակատամարտի դուք, Սրբազան հայր, պսակեցիք ի Նորումս զշինուած նոցա՝ վճռելով զանսխալութիւն քահանայապետաց Հռովմայ։

Զեն ինձ կամք պարզել դնել առաջի աչաց Սրբութեան ձերոյ զպատկեր ճգանց նախորդացն ձերոց յաճեցուցանել զիշխանութիւնն զոր յափշտակեալ էին, զդժուարութեանցն զորս կրեցին նոքա, և զհնարիցն զորս ի գործ եդին առ ի հասանել նպատակին իւրեանց. քանզի առ այս հարկ էր ի մէջ բերել զողջոյն իսկ զպատմութիւն Եկեղեցեացն արևմտից։ Իմ կամք այս էին միայն ասանօր, զի ցուցից եթէ խոնարհականն այն ձեր ասացուած, զոր մեծն Գրիգոր կարգեաց եղ առ կայսերական և ճոխ անուամբս Տէրէրական, որ տուեալ էր եպիսկոպոսացն Կոստանդնուպօլսոյ, ոչ այլ ինչ է՝ եթէ ոչ սնոտի իմն ձև բանի, ընդ որով ծածկեալ կայ անհնարին ամբարտաւանութիւն։ Եւ որովհետև անսխալ հրատարակեցիք դուք զանձն ձեր, հարկ էր ձեզ, Սրբազան Հայր, ի բաց թողուլ զայն, և զայս փոխանակ այնր առնուլ ի կիր. «Պիոս եպիսկոպոս տիեզերական, անսխալ տէր և իշխան ամենայն քրիստոնէից»։ Եւ զստոյգն այսու լինէիք խօսեցեալ։ Ապա թէ ոչ, զի՞նդ իցէ ծառայ զձեզ անուանել, յորժամ դուք տէր և վարդապետ զանձն կոչիցէք և անսխալ վարդապետ։ Տեսցուք արդ զայս ի բառից կանխաբանութեան ձերոյ։

«ՀաանոՒնեամբ արքոյ ժողովոյն»։ Ժողովն չարար ինչ դատաստան, այլ հաստատեաց և եթէ զայն, կամ թէ հաւանեցաւ, որպէս ասէքդ։

Թոյլ նտուք դուք Ժողովոյն ի խորհուրդ մտանել, բայց այսու պայմանաւ՝ զի տացէ զՀաւանութիւն իւր, յառաջադոյն զիտելով թէ մեծագոյն մասն Ժողովականացն ի ձեր կողմն եղիցի։

Քանի՞ մեծ է խտիրն, Սրբազան Հայր, ընդ ձերդ Ժողով և ընդ Ժողովս դարուցն առաջնոց։ Յառաջինսն ի Ժողովոց անտի Ժողովն ինքնին հաստատէր զիւրն դատավճիռ. և յորժամ եպիսկոպոսունքն ամենեքին առնէին զդատաստան ամենայն աղաւութեամբ, եպիսկոպոսունքն Հռովմայ ոչ ինչ ընդհատ յայլոցն ընդունէին զդատավճիռ նորին և հրատարակէին զայն իբրև զձայն Եկեղեցւոյ։ Իսկ այժմ դուք միայն էք որ առնէք զդատաստան, և ձերովդ իշխանութեամբ ևեթ հրատարակէք զայն. օրէնսդիր դուք էք, և եպիսկոպոսունքն ունին միայն իրաւունս տալոյ զՀաւանութիւն իւրեանց հրատարակելոցն ի ձէնջ բանից։

Ի մտի եդեալ է ձեր շնորհ իմն առնել Ժողովոյն ձերում բանիւքդ այդոքիւք, զորս ի վեր այսր յիշատակեցաք. և այսու քաջ քաջ յայտ արարիք, Սրբազան հայր, թէ Ժողովն այն ոչ էր Ժողով։

Ասէք թէ բանք ձեր ուղղեալ են առ ամենեսեան որ գալոց են առ յապայս, ի մշոնջենաւոր յիշատակ երթայս։ Եւ ապապայ սերունդք յիշեսցեն զայն անտարակոյս, և ոչ երբէք մոռասցին՝ թէ գտաւ ուրեք երբէք եպիսկոպոս ոք այնչափ ամբարտաւան, զի յանձն իւր շորթեաց զաստուածային իմն արտօնութիւն, և թէ ի մեծի ուրեք Եկեղեցւոջ, որ միայն ճշմարիտ զինքն ճանաչէ, ահագին բազմութիւն եպիսկոպոսաց յայն աստիճան վատութեան խոնարհեցաւ, զի հաստատեաց զամբարհաւաճութիւնն զայն. և թէ չգտաւ և ոչ մի ոք եպիսկոպոս՝ որ բողոք հարկանիցէ զայնմանէ։ Որք միանգամ ի ձերոցդ հաւատացելոց պահեալ իցեն տակաւին զմասն ինչ հաւատոյ՝ յիշեսցեն անշուշտ, զի դուք գայթակղեցուցիք զնոսա, և բուռն արարիք նոցա կամ ի բաց կալ ի ձէնջ, և կամ արտաքուստ միայն դաւանել հաւատ ինչ այնպիսի՝ զոր ոչ ունին ի սրտի։ Անդամք Եկեղեցեացն ճշմարտապէս ուղղափառաց,

որք անդստին ի բաղմադարեան ժամանակաց հետէ ընդդէմ կ.քրեցան ամբարիշտ նորաձևութեանց հռովմէական աթոռոյն, յիշելով յիշեսցեն՝ զի դուք լցիք զչափն, և նորահնար վարդապետութեամբք ձերովք ստուգեցիք զբանն ասացեալ զաթոռոյն ձերմէ՝ թէ ցանգ ամբարհաւաճ և ի հերետիկոսական մոլորութիւնս ձգտի. թէ դուք փորեցիք զխորխորատն բաժանման, զոր նախորդքն ձեր սկսեալ էին պեղել, և դուք անանցանելի արարիք զայն. յիշելով յիշեսցեն՝ զի եթէ ոչ ինչ հայելով ի մոլորութիւնս նախորդացն ձերոց՝ զիջան նոքա ընդ քրիստոնեայ եպիսկոպոսունս համարել զնոսին, զարդիս ոչ ևս կարեն զնոյն առնել, յորմէ հետէ փորձ փորձեցիք դուք ըստ օրինակի արուսեկին ամբառնալ զանձն ձեր հաւասար Աստուծոյ։

Թերևս ասիցէք՝ արտօնութիւն անսխալութեան պարգև իմն և եթէ իցէ եթէ իցէ շնորհեալ յԱստուծոյ ձերումդ նուաստութեան. այլ ի զուր. քանզի այդու նոր իմն գործէք յանցանս, կցորդ ամբարտաւանութեան ձերոյ ջանալով առնել զԱստուած։ Եւ միթէ չգիտիցէ՞ք, Սրբազան Հայր, զի Աստուած զփառս իւր այլում ոչ տայ։ Որովհետև Աստուած միայն է ճշմարտութիւն, նա միայն կարող է լինել անսխալ։ Անսխալութիւնն է մի յէական ստորոգելեաց Աստուծոյ, և Աստուած չկարէ հաղորդել զայն արարածոյ իմիք՝ առանց զարարածն զայն աստուածացուցանելոյ։ Դուք անսխալ զանձն ձեր կոչելով Աստուած անուանեցիք, և հաստատելովդ թէ Աստուած շնորհեալ է ձեզ զարտօնութիւնդ զայդ՝ յայտ առնէք թէ Աստուած հաղորդեալ է ձեզ զիւրն էութիւն։ Եւ ահա այսպէս խորք ամբարտաւանութեան արկին զձեզ ի խորս հայհոյութեան։

Բ.

Յետ զայսոսիկ խորհրդածութիւնս առնելոյ զմակագրութենէ կանոնական նամակին ձերոյ, մատեցուք ի յառաջարանն նորին։

Ասէք դուք.

«Հովիւն յաւիտենական և վերադիտող (եպիսկոպոս) «հոգւոց մերոց՝ առ ի զաղատարարն զգործ փրկութեան մերոյ «մշանջենաւոր առնելոյ, զեկեղեցի սուրբ կառուցանել սահ- «մանեաց, յորում իրրև ի տան Աստուծոյ կենդանւոյ հաւա- «տացեալքն ամենեքեան միոյ հաւատոյ և սիրոյ զօրիւն կա- «պակցեալք միաւորեսցին։»

Արդարև իսկ այսու նպատակաւ հաստատեաց Քրիստոս զիւրն Եկեղեցի։ Ապա ուրեմն որք միանգամ փոխիցեն զՀաւատն աւանդեալ ի Նմանէ, հակառակ ելանեն Քրիստոսի և գործոյ փրկութեան նորա, վնասակարք լինին ճշմարտութեանցն յայտնելոց ի Նմանէ, մինչդեռ պարտական էին զօր իմն միութեան լինել ամենայն դարուցն առաջնոց և վերջնոց՝ միութեամբ հաւատոյ, և զամենայն ազգս և ազգինս ի մի վայր ածեալ՝ կազմել ի նոցանէ զմի միայն հօտ բանաւոր կերակրեալ ճշմարտութեամբն Աստուծոյ։ Արդ գիտէ ամենայն ոք, Սրբազան Հայր, զի նախորդքն ձեր ի հազար ամաց հետէ աշխատ եղեն ի քանզումն գործոյն Աստուծոյ, և դուք ինքնին առաւել քան զայլն նպաստ եղէք այսմ գործոյ բաժանման, եղծանելով զաւանդն հաւատոյ, հնարելով վարդապետութիւնս նորանորս, և զմարդկային բան ձեր հակառակ ընդդէմ դնելով բանին Աստուծոյ։

Քրիստոս մինչդեռ դառնայրն ի փառս իւր աղօթեաց առ Հայր, որպէս և դուքդ ասէք, ոչ միայն վասն առաքելոց, այլ և վասն ամենեցուն որք հաւատալոց էին ի նա բանիւն նոցա. աղօթեաց զի իցեն ամենեքեան մի՝ որպէս ինքն և Հայր մի են։ Բայց Քրիստոս յաղօթել անդ իւրում վասն ամենայն հաւատացելոց՝ չկամեցաւ երբէք զի այնու խափանեսցի ազատութիւնն մարդոյ։ Քանզի չկամէր նա ունել յԵկեղեցւոջ իւրում ստրուկս անարգս որք կուրօրէն խոնարհեցուցանիցեն զգլուխս իւրեանց, և ոչ իսկ ընդ ազդեցութեամբ Աստուածայնոցն բանից. այլ կամեցաւ զի մարդիկ ազատօրէն տայցեն զՀաւանութիւն իւրեանց ճշմարտութեան ծանուցանելոյ։ Միանգամայն

և զայն գիտէր Քրիստոս՝ զի բազումք ի մարդկանէ ի պատճառս կարեաց կենցաղոյս չկարէին լինել փիլիսոփայք ոմանք. սմին իրի հաստատեաց և զՀնարս փոխադրութեան ճշմարտութեան, որպէս զի անցցէ այն ազգէ յազգ՝ իբրև զժառանգութիւն իմն, և այնպէս պայծառ և յստակ իմասցի՝ զի միօրինակ ի միտ առնուցուն զայն տկարամիտքն և հանճարեղք։ Եւ այս սքանչելի սահման Աստուածային անխախտ պահեցաւ յընթացս ամաց ութհարիւրոց։

Արդ ո՞վ ոք արդեօք շփոթեալ խանգարեաց զայն։ — Պապականն իշխանութիւն։

Քրիստոս ի պահպանութիւն նորին հաստատեաց զառաքելութիւն, և կամեցաւ զի յԵկեղեցւոջ իւրում՝ գտանիցին հովիւք մինչև ցկատարած աշխարհի։ Դուք ինքնին ասէք զայն, և յաւելուք թէ կամեցաւ զի լինիցին հովիւք և վարդապետք։ Եւ զի՞նչ արդեօք նշանակիցէ զանազանութիւնդ այդ։ Ասէ իսկ սուրբն Պօղոս՝ թէ յեկեղեցւոջ են առաքեալք, աւետարանիչք, հովիւք, վարդապետք, բայց և ամենեքեան այլ և այլ կոչմամբ և աստիճանօք և պաշտամամբք զմի և զնոյն կաղմեն քահանայութիւն։ Թուի թէ դուք հովիւս և վարդապետս ասելով՝ զեպիսկոպոսունսն միայն իմանայք. քանզի յետ բանիցն այնոցիկ ածէք իսկոյն ի վերայ՝ թէ «որպէս զի եպիսկոպոսութիւնն ինքնին մի և անբաժանելի իցէ»։ ապա յիշատակէք զքահանայսն՝ իբրու միջակայինս ոմանս ընդ եպիսկոպոսունսն՝ հովիւս և վարդապետս, և ընդ ժողովուրդն, առ ի պահեղոյ զմիութիւն հաւատոց։

Այս ամենայն ասացուածք սուտ են բոլորովին, Սրբազան Հայր։ Քանզի քահանայք յԱստուածային իրաւանց հովիւք և վարդապետք են յԵկեղեցւոջ՝ հանդոյն եպիսկոպոսացն, որովհետ և Փրկիչն մեր զնոյնպիսի ետ իշխանութիւն եօթանասուն աշակերտացն իւրոց՝ զոր և առաքելոցն երկոտասանից։ Ասէք թէ եպիսկոպոսունքն ի վեր են քան զքահանայս, զոր օրինակ և երկոտասան առաքեալքն ի վեր էին քան զեօթանասուն աշակերտսն, և թէ այս դասակարգութիւն յԱստուածային իրա-

ւանց իցէ. ընդ որ հաւանիմք և մեք։ Բայց դուք յեղաշրջէք զսահմանն եդեալ յԱստուծոյ՝ յորժամ եպիսկոպոսութեանն միայնոյ սեպհականէք զհովուութիւն և զվարդապետութիւն։

Այսպէս ուրեմն անդէն իսկ իսկզբան կոնդակին ձերոյ յանդիման առնէք զմի ի մեծամեծ մոլորութեանց Հռովմէական Եկեղեցւոյ, որ ասէ թէ եպիսկոպոսութիւնն իցէ Եկեղեցի ուսուցիչ, և դուք բաժանէք զայն ի բազմութենէ անտի՝ որ պարտի ընդունել յեպիսկոպոսացն կուրօրէն զվարդապետութիւն և զտեսչութիւն, և բազմութիւնն այն կոչիցի Եկեղեցի ուսանող, և կաղմիցի ի քահանայից և ի հաւատացելոց։

Այս մոլորութիւն տիրեալ ի Հռովմէական Եկեղեցւոջ՝ առատահոս աղբիւր իմն եղև բազմապատիկ հերձուածոց։ Քանզի զերաւունս սեպհականս Եկեղեցւոյ առհասարակ փոխարերելով իմասն մի և եթ նորին՝ անհետ արարին զնարս աւանդութեան ճշմարտութեանն, զոր կամէր հաստատել Քրիստոս։ Արք ոմանք եպիսկոպոսութեան անուամբ պատուեալք համարեցան ունել իրաւունս հարկ առնելոյ այլոց հաւատալ ըստ իւրեանց մտացն, և եղին ի մտի թէ վճիռքն սահմանեալք՝ ի խորհուրդս նոցա ունիցին զշնորհս անսխալութեան։ Իշխեցին նոքա կոչել զանձինս իւրեանց գործարանս Հոգւոյն Աստուծոյ։ Եւ այսպէս եղծին զեղծին զինդիրն անսխալականութեան, և զայն ինչ որ արդարև իմաստասիրական և բանաւոր իմն էր՝ դարձուցին և արարին հայհոյանս և անհնարին անտեղութիւն։

Եւ յիրաւի. յի՞նչ հաստատեալ իցէ անսխալութիւն Եկեղեցւոյ։ Մի՞թէ ի դատաւճի՞ռս անդամոց ոմանց՝ եպիսկոպոսութեան անուամբ պատուելոց։ Ոչ ընաւ։ Եպիսկոպոսունքքն ևս հանգոյն այլոց մարդիկ են, ուստի և սխալականք իբրև զնոսա։ Թէպէտ և միաբանիցին և կամ ոչ, թէպէտև վիճաբանիցեն կամ ի խորհուրդ մտանիցեն, և կամ վճիռ ինչ հատանիցեն, կարծիք նոցա և դատաւճիռք այնքան միայն ունին արժանիս՝ որքան տայցէ նոցա անձնականն իւրեանց կատարելութիւն։ Եպիսկոպոսութիւնն ևս չէ և չէ անսխալական, որպէս և ոչ պապն։ Ցայսմ և եթ հաստատեալ կայ

անսխալութիւն, զի յայտնեալն ճշմարտութիւն անարատ պահպանիցի ի բովանդակ Եկեղեցւոջ։ Ապաքէն քաջայայտ իմն է՝ զի նաև արտաքոյ Աստուածային ազդեցութեան՝ ընկերութիւն ինչ բազմաթիւ տարածեալ ի զանազան տեղիս յորս պէսպէս իցեն բարք և սովորութիւնք և ախորժակք, անայլայլակ պահէ զվարդապետութիւնն՝ յորոյ վերայ հիմնեալ իցէ. զի եթէ մասն ինչ այնր ընկերութեան ի մասնական ինչ վայրի կամիցի ընդդէմ կալ նմա, միւս մասն իսկոյն բողոք հարկանէ զայլայլութենէն զոր կամիցի նա առնել։ Այսպիսի ինչ է աւասիկ և քրիստոնէականն ընկերութիւն՝ որ կոչի Եկեղեցի. քանզի տարածեալ գոլով ընդ ամենայն տեղիս՝ որոց պէսպէս են շահք պիտոյից, միայն այնու գոնի բաժանեալ՝ զի ընդդէմ կայ փոփոխութեանցն զորս առնիցեն յայնմ վարդապետութեան Եկեղեցիք ոմանք մասնաւորք։

Այս աւասիկ առաջին պատճառ է որ իրաւացի գործէ զանուանեալն անսխալութիւն Եկեղեցւոյ. յոր թէ յաւելուցուք և զաստուածային ազդեցութիւն, որ չթողուցու միում միում ի մասնական Եկեղեցեաց խանգարել զվարդապետութիւնն յիւրմէ կողմանէ, և պահպանիցէ միշտ ի մէջ քրիստոնէից զմի Եկեղեցի հաւատացեալ և յարատև՝ յայտնապէս միաւորեալ ընդ ամենայն դարուց անդստին յառաջնոցն ժամանակաց, լաւ ևս ի միտ առցէ զի այն Եկեղեցի զուտ և անխառն պահեալ է զաւանդն յայտնութեան՝ առանց փոխելոյ, և առանց պլպլելոյ, այս ինքն է առանց մոլորութիւնս ի նոյն խառնելոյ, կամ թէ անսխալապէս։

Ապա ուրեմն անսխալութիւնն ոչ եթէ արտօնութիւն ինչ է Աստուածային՝ տուեալ առն միում կամ բազմութեան մարդկան այսպէս կամ այնպէս կոչեցելոց, կամ թէ մասնաւոր ինչ Եկեղեցւոյ, այլ ամենայն հաւատացեալ քրիստոնէից՝ որ պահիցեն զաւանդն Աստուածային հաւատացեալ միանգամ քրիստոնէիցն ժողովոյ։

Եւ զո՞ր իրաւունս ունիցին ընաւ Եպիսկոպոսունք անսխալական լինելոյ։ Եւ ոչ մի։ Մի միայն պարտս ունին նոքա՝

եղեալ ի վերայ նոցա ի հովուական պաշտամանէն, այն իսկ է հսկել ի վերայ անվթար պահպանութեան վարդապետութեանն ի մասնաւոր Եկեղեցւոջ իւրեանց. յանդիմանել զվնասակարութիւնսն զորս այս ոք կամ այն գործիցէ նմին. դատապարտել զամենայն կարծիս որ հակառակ իցեն ողջամիտ վարդապետութեան, ոչ եթէ զօրութեամբ իշխանութեան իրիք զոր ունիցին ի վերայ այնր վարդապետութեան, այլ յանուն Եկեղեցեաց իւրեանց, որոց ինքեանք թարգմանք են և պատգամաւորք։

Եթէ մոլորութիւն ինչ ձգտիցի ի տարածանել յընդհանուրս, եպիսկոպոսունքն կարող են ի մի վայր ժողովել, զի ի միասին դատապարտ առնիցեն զմոլորութիւնն զայն, մեն մի ի նոցանէ յանուն իւրումն Եկեղեցւոյ։ Յայնժամ աւանիկ կազմեն նոքա ժողով արդարև տիեզերական։ Յորժամ եպիսկոպոսունքն խօսիցին իբրև զարձագանս ինչ յարատև հաւատոյ, և իւրաքանչիւր յանուն իւրոյ եկեղեցւոյն, յայնժամ Եկեղեցին ողջոյն խօսի բերանով նոցա, և վճիռ նոցա կցորդ է անսխալութեան նորին իսկ Եկեղեցւոյ։

Աստի դիւրաւ ի միտ առնուլ է թէ քանի՞ իրաւացի իցէ անսխալութիւնն այսպէս իմացեալ, և թէ քանի՞ մեծ է կրկին մոլորութիւնն տիրեալ ի վերայ Եկեղեցւոյն Հռովմայ ի խնդիրսն անսխալութեան եպիսկոպոսաց առելոց արտաքոյ քրիստոնէիցն ժողովոյ, և պապին իսկ՝ առելոյ արտաքոյ եպիսկոպոսացն բազմութեան։ Եպիսկոպոսականն անսխալութիւն ի Հռովմէական Եկեղեցւոջ եղև նախադուռն պապական անսխալութեան, ընդ որ բնական իմն եղանակաւ լինէր մուտ գործել ի նոյն. վասն որոյ և դուք, Սրբազան Հայր, սքանչելի իմն դիւրութեամբ անցանէք ի միոյ ի միւսն։

Ասէք դուք, եթէ եպիսկոպոսունք կարգեալ են ի պահպանել ի ձեռն քահանայից զմիութիւն Եկեղեցւոյ, և թէ Պետրոս ընկալաւ զառաջնութիւն առ ի պահպանել զմիութիւն ի բազմութեան եպիսկոպոսաց։ Ապա ուրեմն առաքեալքն այն ինչ էին՝ համեմատելով ընդ Պետրոսի՝ որ ինչ և քահանայքն

համեմատութեամբ եպիսկոպոսաց, այս ինքն է միջնորդ պահ-
պանութեան միութեանն՝ որոյ կեդրոն էր նա։ Զոր օրինակ ե-
պիսկոպոսունքն յաջորդելոց էին առաքելոց, ընդ նմին և մի ոմն
ի նոցանէ ունէր յաջորդել սրբոյն Պետրոսի. և դուք ոչինչ
երկմտէք՝ թէ եպիսկոպոսն այն եպիսկոպոսն Հռովմայ իցէ.
ուստի և արժան իսկ չհամարիք ապացուցանել զայն։

Չերդ փոյթ խնամոց այս միայն է՝ զի հաստատիցէք զար-
տօնութիւնս որբոյն Պետրոսի։ Քրիստոս կարգեաց, ասէր, զե-
բանելին Պետրոս ի վերոյ քան զայլ առաքեալսն, որպէս զի ի
նմա հաստատեսցէ զմիութեանն սկիզբն միտնջենաւոր (զեպիս-
կոպոսութեան և զեկեղեցւոյ), որպէս զի արասցէ զնա հիմն
երևելի, և ի վերայ նորա կառուսցի տաճարն յաւիտենական
մինչև յերկինս ամբարձեալ։

Այսմ վարդապետութեան ձերում հաստատութիւն ի մէջ
բերէք զբան սրբոյ ուրումն Հռովմայ եպիսկոպոսի՝ զԼևոնի
ասեմ մեծի (*)։

Աստանօր յուշ առնեմ ձեզ, Սրբազան Հայր, զի չէք
երբէք երանելւոյն Լևոնի ուսուցեալ վկարդապետութիւնն զոր
ընծայէք դուք նմա։ Արդարև գովեաց և բարձրացոյց նա իրա-
ւամբ զանձնական արտօնութիւնս սրբոյն Պետրոսի, այլ չասաց
երբէք՝ թէ նա միայն առանց այլոցն առաքելոց հիմն եղև Ե-
կեղեցւոյ, և զմտաւ անդամ չէք ածեալ նորա ընծայել եպիս-
կոպոսացն Հռովմայ զանձնական արտօնութիւնս զլսաւորին
առաքելոց։ Ապա ուրեմն դուք զբանս սրբոյն Լևոնի ի մէջ բե-
րելով՝ կամեցայք պատրել զընթերցողս ձեր. որք թէ կամի-
ցին հաւաստեաւ տեղեկանալ թէ ոչ ունէր զդաւանութիւն

(*) Որ՝ մանգամ է մերաշնեայցն ընթերցողաց տաջահմատ էցեն
եկեղեցական պատմութեան, և նիւ յո՛ր մեծարան անուն զԼևոն
Յոյն՝ և Լատին՝ առնուսարակ, ուշինչ անշուշտ ծաներ նուաեայցի
յանուն այնպիսեացն փոփոխեամբ յեշատակութեան այնր եպիսկոպոսի
Հռովմայ։ Տաճ. Թարգ։

վարդապետութեանն զոր դուք ընծայէք նմին՝ կարող են ակ-նարկել ի բնագիր անդր նորա։

Սուրբն Լևոն եպիսկոպոս էր Հռովմայ և ոչ այլ ինչ, որպէս յայտ առնեն գրուածքն նորա և գնացք։ Ապա ուրեմն մի՛ խառնավար առնէք զբանս ինչ նորին, այլ պատկառեցէք ի վարդապետութենէ նորա՝ չիմանալով զայն այլ ընդ այլոյ։

Եւ արդ դուք, Սրբազան Հայր, այլափոխեալ էք զբնագիր սրբոյն Լևոնի, բայց և այլ ևս այլափոխութիւնս չարաչարս առնէք ի հետագայսն։

Զհերետիկոսական վարդապետութիւնն զոր ի մէջ բերիք՝ առաջի առնէք իբրև զաստուածային իմն, և համարիք զի դրբունք դժոխոց ջանան յաղթահարել զնա, և դուք պարտիք պաշտպան կալ նմին։ Ներեցէք ինձ յուշ առնել ձեզ նախ զայս ինչ, զի դրբունք դժոխոց կամ զօրութիւնք դժոխոց ոչ այն ինչ են զոր դուքդ կարծէք։ Ի թիւս այնոցիկ՝ որ հակառակին վարդապետութեան ձերում՝ տեսանեմ նախ զայնպիսիս, որք զօրութեամբ բանական մտաց յարձակին ի վերայ նորա։ Արդ բանականութիւնն տուեալ է մարդումս յԱստուծոյ. պարգև է այն Աստուծոյ, և ոչ թէ տուրք իմն դժոխոց առ մարդիկ։ Բանականութիւնն էական մասն է կազմութեան մարդկայինս բնութեան. իսկ մարդն ոչ եթէ ձեռագործ է այսոյ ուրուք չարի, այլ արարած Աստուծոյ, որ զարդարեալ է զնա ազատութեամբ, իմացականութեամբ և բանականութեամբ՝ առ ի պաշտելոյ զնա։ Այլ դուք ասէք՝ թէ որք միանգամ հերքեն զվարդապետութիւն աստուածային իշխանութեան պապին՝ մեղանչեն ընդդէմ բանականութեան իւրեանց։ Եւ այդ իսկ է զոր հարկ ի վերայ կայ քննել. զի դուք դատաւոր էք միանգամայն և դատախազ, և ամենայն իրաւք օրէն է հերքել զբանս ձեր։

Ի կարգի անդ հակառակորդաց վարդապետութեան ձերոյ տեսանեմ ես զբազմութիւն մեծամեծ Եկեղեցեաց, զԵկեղեցեացն արևելից ասեմ, զորոց չկարէք դուք ամբաստան լինել թէ նորաձևութիւնս ինչ մուծեալ իցեն ի վարդապետութիւնս

հաւատոյ. ևս և Եկեղեցիք արևմտից՝ որք բողոքեալ են ընդդէմ նորաձևութեանց նախորդացն ձերոց, և ընդդէմ գայթակղական զեղծմանց՝ որք յամենայն ժամանակի երևեալ են ի պապական պալատանն։ — Բացէ ի բաց մերժէք դուք զվկայութիւնս եկեղեցեացն այնոցիկ, զի հակառակ են նոքա ձեզ. բայց խնդիր այն է՝ թէ ունիցիք արդեօք իրաւունս ընդդէմ Եկեղեցեացն այնոցիկ ամենեցուն։ Դատավճիռն ձեր ըստ ինքեան յայնժամ ևեթ զօրէ ինչ, յորժամ ունելով ունիցիք զամենայն իրաւունս զորս թևակոխէք ունել. և այս իսկ է զոր ցանայ ձեզ ամենայն ոք։

Տեսանեմ ես և երրորդ իմն դաս հակառակորդաց վարդապետութեանն ձերոյ. և նոքա դտանին ի ձերումդ իսկ Եկեղեցւոջ։ Ոմանք ի նոցանէ կարծիս տալով ընդունել զայն, պայմանս այնպիսիս դնեն՝ որովք եղծանի բոլորովին. և այլք բացէ ի բաց ժխտեն զայն. և զայսպիսի հակառակորդս դտանեմ ես ի մէջ իմաստնագունից անդամ հաւատացելոց և ի մէջ եկեղեցականաց գլխովին։ Եւ սոքա ամենեքեան քրիստոնեայ հակառակորդք ոչ միայն զօրութեամբ բանական մտաց հիւքեն զձերդ վարդապետութիւն, այլ զօրութեամբ վարդապետութեանն որ յարաժամ լեալ է յԵկեղեցւոջ անդստին ի սկզբանէ։

Եւ սակայն իշխէք դուք, Սրբազան Հայր, պնդել ի ձէնջ կողմանէ՝ թէ վարդապետութիւնն ձեր համաձայն իցէ վաղնջուց և հաստատուն հաւատոյ տիեզերական Եկեղեցւոյ։ Արդարև իսկ այնպիսի իմն ստապատիր ասացուած է այդ՝ զի չըկարեմ ես ի միտ առնուլ՝ թէ զիարդ յանդգնեցայք բարբառել յանդիման ամենայն աշխարհի։ Պա՞րտ իցէ ինձ արդեօք համարել՝ թէ գիտելով գիտէք դուք զստութիւն նորին։ Այլ պատկառելովս ի ձերմէ ալևորութենէդ՝ չկամիմ զայդ կարծել. ապա թէ ոչ, հարկ լինէր ստախօս զձեզ անուանել։ Զիա՞րդ ապա կարողացայք դուք ասել զայդ։ Քանզի յանդէտս ընկալարուք զստութիւնն՝ զորոց արք անզգամք կամեցան արկանել ի վերայ ձեր զպատասխանատուութիւն։ Եւ արքն այնոքիկ

քաջածանօթք են ամենեցուն, թէպէտև թաքթաքուր շրջին և կեղծաւորին, և առ աչս մարդկան հետախաղաղ իմն լինին։ Օձք են նոքա, որք սպրդեալ սողոսկեն ամենայն ուրեք ի գաղտնիս, եզուիթքն են նոքա՝ որոց ջան ի մտի եդեալ է ի վտանգ զձեզ արկանել և աստուածացուցանել զձեզ՝ առ ի զանձինս աստուածացուցանելոյ, ընծայելով ձեզ իշխանութիւն այնպիսի՝ յորում ինքեանք և եթ վայելեսցեն։ Արքն այնոքիկ գարշելիք՝ նոքին իսկ են որ թելադրեցին ձեզ զանխոհեմն ստութիւն, զորոյ ընկալարուք դուք զպատասխանատուութիւն, որպէս և զայլ ամենայն ստութիւնսն զորս նշանակեսցուք մեք ի ձերումն կոնդակի։

Գ.

Յաղագս կրթելոյ երանելւոյն Պետրոսի յառաջնորդութեան առաքելոցն Քրիստոսի։ Այս խորագիր է, Սրբազան Հայր, առաջին գլխոյ կոնդակին ձերոյ։

Մի՞ զիք աղաչեմ, զի ձայնդ առաջնորդութեան երկբայական է։ Քանզի սուրբն Պետրոս կարող էր լինել առաջին յառաքեալս թուական կարգաւ, և յայնժամ այլք յառաքելոց անտի հաւասար լինէին նմա իշխանութեամբ, իսկ նա լինէր առաջին ի մէջ հաւասարեաց։ Այլ և կարող էր լինել առաջին ի պատճառս արտօնութեանց ինչ կամ անձնական կատարելութեանց, առանց աւելի ինչ իշխանութեան։ Դարձեալ կարող էր ունել զառաջնութիւն հանդերձ իշխանութեամբ իւիք՝ առանց ունելոյ այնր աղագաւ զօրութիւն ինչ այնպիսի՝ զոր դուքն կամիք։ Եւս և կարող էր առաջին լինել բացարձակ իշխանութեամբ ըստ ձերումդ կամաց, բայց առանց այսր պայմանի՝ զի իշխանութիւնն այն անցանիցէ ժառանգութեամբ առ եպիսկոպոս ոք առանձինն ամենայն. քանզի մարթ իսկ էր իշխանութեանն այնմիկ անցանել ի ձեռս Եկեղեցւոյ որ աւանդէր զայն արժանաւորագունի ումեք։

Եթէ ապացուցանէիք դուք թէ սուրբն Պետրոս ընկալաւ զառաջնութիւն ինչ ընդհանրապէս, սակայն և այնպէս ոչ կարէիք հասանել Նպատակի ձերում։ Բայց դուք արժան անգամ չհամարիք ապացուցանել զայն, այլ անցանէք իսկոյն յառաջնութենէ անտի յիշխանութիւնն, և յիշխանութիւն բացարձակ, առանց իմանալոյ անգամ զի ի միոջէ խնդրոյ յայլ խնդիր անցանէք. որով և առնէք իմաստակութիւն թանձր յոյժ, և լուծանէք զսկզբնական կանոն անգամ տրամաբանութեան։

Վասն որոյ ապացուցանէք և յայտ առնէք հռչակաւ՝ թէ Քրիստոս Տէրն մեր խոստացաւ և ետ ուղղակի և անմիջապէս երանելւոյն Պետրոսի զառաջնութիւն իրաւասութեան ի վերայ համօրէն Եկեղեցւոյն Աստուծոյ։

Ուսուցանէք և յայտ առնէք, Սրբազան Հայր, բայց ոչ ապացուցանէք. զոր հարկ իսկ էր առնել վասն ամենեցուն նոցա (որպիսիք ոմանք բազումք են յոյժ՝ ևս և ի ձերում Եկեղեցւոջ) որք ոչ հաւատան լոկոյ բանին ձերում։ Մինթէ առ տգէտսն և առ մոլեկրօնս և եթէ խօսեցայք, որք հաւատացեն կամ կեղծիցեն հաւատալ ամենայնի զոր դուք կամիցիք։ Ապա ուրեմն ոչ ունէիք պէտս այդքան հանդէս և հռչակ ընծայելոյ ուսուցանելոյն ձերում և յայտարարութեան։ Քաջայայտ իմն է՝ զի առ հակառակորդս իշխանութեանն ձերոյ խօսեցայք. արդ զի՞նչ նշանակիցեն վասն նոցա բանքդ ձեր, ապացուցանէք և յայտ առնէք։ Ապաքէն նոքա ապացոյցս պահանջեսցեն, զորս դուք ոչ ետուք նոցա։

Ճշմարիտ է զոր ասէքն՝ թէ ունիք բանիցն ձերոց վրկայութիւնս յաւետարանէ. բայց և զայն գիտէք՝ զի հակառակորդքն ձեր ոչ իմանան զբանս աւետարանին ի նոյն միտս յորում և դուք։ Եւ ոյր բանքն արդարացի իցեն, ձե՞րդ թէ նոցայն։ Ապաքէն այս խնդիր յառաջ քան զայլն ամենայն պարտէր առնուլ զլուծումն, որով տայիք ապացոյցս զորս բոլորովին մոռացեալ էք։ Կրկնեցէք որչափ և կամիք զվկայութիւնսն «Դու ես վէմ», և՛ն և՛ն. «Արածեա՛ զոչխարս իմ», և՛ն և՛ն.

ոչ ինչ շահիք այնու. քանզի հակառակորդքն ձեր պնդեն և հաստատեն՝ թէ դուք բոլորովին այլ ընդ այլոյ իմանայք ըզ-նոսին։ Ասէք դուք արդարև՝ թէ «Կամուղիկէ Եկեղեցին ցանկ իմացեալ է զբանսն զայնոսիկ որպէս դուքդ իմանայք»։ Բայց մի թէ չգիտիցէ՞ք զի հակառակորդքն ձեր վաղու ևս զնորին հակառակն հաստատեալ են, և հաւաստի արարեալ՝ զի վկա-յութիւնք Նախնի հարց և Նախնի ժողովոց, զորս ի մէջ բե-բրեն աստուածաբանքն ձեր, կամ ի հիմանց հնարեալք են և կամ այլայլեալք և խարդախեալք, կամ թէ յայլ միտս ի-մացեալք բոլորովին, և ոչ ըստ մտաց հեղինակացն։ Կամ թէ կամակա՞ր մտօք արդեօք ընծայէք անձին ձերում ստութեամբ զվկայութիւն Նախնի Եկեղեցւոյն, որ յայտնաբարբառ բանիւ դատապարտ առնէ զձեզ։ Իցէ այն որպէս և է, սակայն արք զգօնամիտք չկարեն հաւանել ընդ բանս ձեր։

Յետ խօսելոյ ի խորագրի անդ բանիցդ զլոկոյ առաջնութենէ, անցանէք յընթացս բանիդ յարաջնորդութեան, և ապա ի նզովսն՝ որովք վախճան առնէք այնմ գլխոյ։ Յառաջ ևս մատուցեալ ասէք՝ թէ սուրբն Պետրոս կարգեցաւ գլուխ ամենայն առաքելոց, և երևելի գլուխ բովանդակ զինուորեալ Եկեղեցւոյ։ Այսպէս ահա կամաւորապէս խառնակէք ընդ մի-մեանս զգաղափարս առաջնութեան, իշխանութեան և բացար-ձակ իշխանութեան։

Յաւ է ինձ, Սրբազան Հայր, տեսանել զի այսպէս առ ոտն հարկանէք զքաջայայտ սկզբունս ուղիղ մտաց, որպէս զի հաստատիցէք զառաջարկութիւն մի անկարելի։ Եւ մի՛ լիցի ինձ հերքել զբանս ձեր. քանզի և զի՞նչ շահ անտի։ Ամենայն բանք ձեր հաղարիցս և բիւրիցս անգամ շանթահարեալ են ի բանական մտաց, ի բազմահմուտ արանց, և ի հաստատուն վկայութենէ Եկեղեցւոյ։ Շատ համարիմ մատնցոյց և եթ առնել, որպէս արդ խսկ արարի, թէ խառնակէք դուք ընդ մի-մեանս խնդիրս երիս, որոց ոչ է բնաւ կցորդութիւն ընդ իրերաց։

Յաւելից աստանօր և դիտողութիւնս քանի մի զերկուց վկայութեանց Աւետարանին՝ զորս ի մէջ բերէք։

Դիցուք թէ արդարև ձայնս վէմ յառաջնումն վկայութեան անկ է սրբոյն Պետրոսի, թէպէտ և իրօք ոչ իցէ այնպէս։ Արդ զի՞նչ այտի. ոչ ապաքէն այս՝ թէ խոստացաւ Քրիստոս սրբոյն Պետրոսի՝ զի նա եղիցի հիմն, յորոյ վերայ շինեսցի Եկեղեցին։ Սակայն սուրբ գիրն ազդ առնէ մեզ՝ թէ խոստումն այն կատարեցաւ յերկոտասանեսին առաքեալսն, որք են, որպէս և սուրբն Յովհաննէս ասէ, երկոտասան հիմունք Եկեղեցւոյ։ Առաքեալն զերկոտասանեսին և յիշատակէ նովին անուամբ. ապա ուրեմն սուրբն Պետրոս ոչ ունէր զանունն զայն արտաքոյ այլոցն կարգի։ Ի նմին վկայութեան խոստացաւ Քրիստոս սրբոյն Պետրոսի՝ տալ նմա զփականս արքայութեան երկնից, այս ինքն է զիշխանութիւն յեկեղեցւոջ. արդ ե՞րբ կատարեաց նա զխոստումն իւր.— յորժամ ետ զփականսն կամ զիշխանութիւն ամենայն առաքելոց իւրոց միանգամայն փչեաց ի նոսա և ասէ. «առէք Հոգի սուրբ», ևն։

Ո՞ւր արդեօք տեսիք դուք, Սրբազան Հայր, թէ Քրիստոս տուեալ իցէ սրբոյն Պետրոսի միայնոյ իշխանութիւն ինչ բոլորովին տարբեր յայլոցն։ Ապաքէն և ոչ ուրեք։ Եւ ահա վասն այսորիկ ուսուցին հարքն սուրբք՝ թէ սուրբն Պետրոս դաւանելովն զԱստուածութիւն Քրիստոսի՝ խօսեցաւ ի դիմաց համօրէն առաքելոց, և թէ Քրիստոս արար զխոստմունս իւր ամենայն առաքելոց ի դէմս Պետրոսի։

Երկրորդ վկայութիւնն տկարագոյն ևս է ըստ ամենայնի։ Եւ նախ պարտ էր ձեզ գիտել, Սրբազան Հայր, զի Պետրոս ուրանալովն երիցս անգամ զվարդապետ իւր՝ կորուսեալ էր զառաքելութեանն պաշտօն. յայնժամ՝ ի միտ առնուիք՝ թէ զի՞նչ իցէ երրակին յայտարարութիւն սիրոյ, զոր յետ յարութեան իւրոյ հարցանէր ցնա Քրիստոս. յայնժամ՝ ապա զիւրին լինէր ձեզ ի միտ առնուլ՝ թէ բանքն «Արածեա զգառինս իմ, արածեա զոչխարս իմ», ոչ այլ ինչ նշանակէին՝ եթէ ոչ զվերստին կարգումն սրբոյն Պետրոսի ի շարս հովուաց Եկեղեցւոյ։ Այնչափ հեռի էին բանքն ի շնորհելոյ առաքելոյն արտօնութիւնս ինչ գերազանցս, զի և տրտմեցաւ նա ի լուր

բանիցն փրկչին։ Այս իմաստ բանից Աւետարանին զոր ի մէջ բերի ըստ Հարցն սրբոց, առաւել ևս պարզի բանիւքն զոր ասաց Քրիստոս. «Արդ եկ զկնի իմ» որ է ձև կոչման յառաքելութիւն։ Ապա ուրեմն վկայութիւնն յորում համարեցայք դուք տեսանել արտօնութիւնս մեծամեծս և գերազանցս, ոչ այլ ինչ է եթէ ոչ վերստին ընդունելութիւն, վերստին հաստատութիւն սրբոյն Պետրոսի։ Մի գուցէ կամիցիք դուք և խորհուրդ ինչ նկատել ի ձայնսդ գ՚ոՒնՒ և ուխտ։ Եւ կարի իսկ քաջ. քանզի մարդահաճոյ աստուածարանքն ձեր և շողոմարարք ասացեալ են ձեզ՝ թէ ձայնդ գ՚ոՒնՒ զՀաւատացեալս նշանակէ, և ձայնդ ուխտ զեպիսկոպոսունս։ Ըստ ոչ բախտի ձերում, սուրբ դիրն զնոյն և զմի իմաստ ընծայէ երկոցունցդ ևս բառից. քանզի ընդ առաքեալսն խօսելով Քրիստոս ասէր ցնոսա անխտիր. «Ահաւասիկ առաքեմ ես զձեզ իբրև ոչխարս ի մէջ գայլոց»։ և կամ այսպէս. «Առաքեմ զձեզ՝ իբրև գ՚ոՒնՒ ի մէջ գայլոց»։ Ապա ուրեմն աւետարանիչքն չտեսին ինչ ի բանսդ խորհրդաւոր իմաստ այնպիսի։ Այլ և, Սրբազան Հայր, աստուածարան ոմն եղուիթ և յոյժ պապական, Մալտոնաթ ասեմ, հաւաստի առնէ՝ զի յորժամ խտիր ինչ դնիցէք ընդ ոչխարս և ընդ գառինս, ի ծաղը շարժէք զարս իմաստունս։ Եւ զայս ասացեալ է նորա ի մեկնութեան աւետարանին Յովհաննու, որպէս կարող էք ստուգել ի մատենէ անտի նորա։

Թուի ինձ, Սրբազան Հայր, թէ չիցէ ինչ պիտոյ աստանօր յերկարել ի վիճաբանութիւն հմտական զերկուցդ զայդոցիկ վկայութեանց. քանզի ոչ ունին նոքա բնաւ ամենևին զօրութիւն ինչ ապացուցի. և սակայն դուք ի վերայ նոցին կառուցեալ էք զիտառամոն շինուած ամենայն արտօնութեանցն ձերոց և անսխալութեան ձերոյ։

Դ.

Հասաք ահաւասիկ յերկրորդ գլուխն կոնդակին ձերոյ՝ որ մակագրի, Յաղագս յաջորդելոյ առաջնորդութեանն Պետրոսի յանձինս փոխանորդապետացն Հռովմայ։

Աստանօր բացայայտագոյն ևս բանիւք խօսիք դուք զարտօնութեանց սրբոյն Պետրոսի։ Յառաջին գլուխն առաքեալն այն ասացաւ ունել զառաջնութիւն իրաւասութեանն, և եղև պետ առաքելոց, և Ճշմարիտ գլուխ Եկեղեցւոյ։ Յերկրորդումն կոչէք դուք զնա «պետ և գլուխ առաքելոց, սիւն հաւատոյ, հիմն Եկեղեցւոյ անպակասելի, և ընդունող փականաց արքայութեան երկնից»։ Երթալով երթայք և աճեցուցանէք զբանս ձեր՝ մինչ հեռանայքն ի վկայութեանց անտի զորս ի մէջ բերիք, և յորս չէիք ինչ բնաւ այնպիսի։

Բեր արդ տեսցուք եթէ զիա՛րդ տրամաբանիցէք առ ի ցուցանելոյ՝ թէ արտօնութիւնքն ընծայեալք ի ձէնջ սրբոյն Պետրոսի՝ անցեալ իցեն ի քահանայապետս Հռովմայ։

Հարկ ի վերայ կայ զի առաջնութիւն սրբոյն Պետրոսի հաստատեալ ի փրկութիւն և ի յարատև օգտաբերութիւն Եկեղեցւոյ՝ լեալ իցէ յարատևական իմն եղանակաւ յայնմ Եկեղեցւոջ։ Արդ չէք ասէք, երկբայութիւն՝ զի այս առաջնութիւն տևեալ իցէ անընդհատ ի յաջորդս նորա յեպիսկոպոսունս Հռովմայ բազմեալս յաթոռն հիմնեալ ի նմանէ, ոռոգեալ արեամբ նորա, յորոյ վերայ կեայ նա և նախագահ բազմեալ կայ։ Եւ ի հաւաստիս այսր ասացուածոյ ի մէջ բերէք զպարծս ժողովոյն Եփեսոսի, և զթուղթ սրբոյն Պետրոսի Ոսկիարանի առ Եւտիքէս։

Տեսցուք արդ նախ՝ եթէ որպիսի՛ ինչ իցէ զօրութիւն բանից հեղինակացն զորս ի մէջ բերէք, և թէ մարթացա՞ք արդեօք գտանել ի նոսա զոր ինչ ցանկայքն գտանել։

Ասէք դուք նախ՝ թէ առաջնութիւնն զոր համարիք թէ ունէր սուրբն Պետրոս՝ հաստատեալ իցէ յարատևակ իմն եղանակաւ յԵկեղեցւոջ. երկրորդ՝ թէ եպիսկոպոսունք Հռովմայ

ժառանգեալ իցեն զայն վասն այնորիկ զի յաջորդք են առաքելոյն։

Եւ արդ զի՞նչ ինչ ասիցէ ի վերայ միոյ միոյ ի բանից այսոցիկ ժողովն Եփեսոսի՝ զոր ի վկայութիւն կոչէք։— Ոչ ինչ բնաւ ամենևին։ Զի՞նչ ինչ ասիցէ Պետրոս Ոսկիբանն զնոցին իրաց։— Ոչ ինչ բնաւ ամենևին։ Զի՞արդ ապա, Սրբազան Հայր, իշխիցէք դուք ի վկայութիւն կոչել զնոսա։ Վրիպակա՞ւ արդեօք եթէ խաբկանօք՝ ոչ գիտեմ. բայց աղետալի իմն է տեսանել՝ զի հետազօտէք դուք զայդպիսիս ի զրուածս վաղեմիս որք դատապարտ առնեն զձեզ։ Թոյլ տուք ինձ ապա, Սրբազան Հայր, զարմանալ ընդ այն՝ թէ զի՞արդ իշխեցիք դուք ասել հրապարակաւ՝ թէ չիք երկբայութիւն՝ զի առաջնութիւն սրբոյն Պետրոսի, որպիսի դուքդ սահմանեցիք զայն, անցեալ իցէ ժառանգութեամբ յեպիսկոպոսունս Հռովմայ։

Մեծարոյ և առաքելական Եկեղեցին արևելեան բացէ ի բաց մերժէ, և միշտ մերժեալ է և՛ զառաջնութիւնն զայն և՛ զյաջորդութիւնն յոր դուքդ թևակոխէք։ Մեծամեծ Եկեղեցիք քրիստոնէիցն արևմտից անջատեցան ի Հռովմայ հերքելով և մերժելով զկրկին մոլորութիւնդ զայդ՝ յոր նախորդքն ձեր մղէին ընկենուին զնոսա ի միջին դարս։ Ա՛յլ և ի ձերումդ իսկ Եկեղեցւոջ աստուածաբանք իմաստունք և պատմաբանք և փիլիսոփայք և քննաբանք անհամար բազմութեամբ անդստին իսկզբնաւորութենէ պապական իշխանութեան յիններորդ դարէ մինչև ցմեր աւուրս՝ քննադատեցին, ամփոփեցին, և յայտնապէս իսկ հերքեցին զարտօնութիւնսն զորս ընծայէք դուք սրբոյն Պետրոսի, և զորս եպիսկոպոսունքն Հռովմայ սեպհականէին անձանց իբրև զժառանգութիւն առաքելոյն այնորիկ։

Մնան ի ձեր կողմն միանձունք ոմանք և եթ միջին դարու, եղուիթքն, և խումբ մի տգիտաց կրօնամոլից՝ որք պատրաստ են ի հաւատալ ամենայնի զոր ինչ և կամիցիք՝ առանց քննութեան և առանց հաւանութեան մտաց։

Եւ չէ իսկ հնար թէ չդիտիցէք դուք այսմ այսպէս լինել. զի՞նդ ապա կարողացայք ասել՝ թէ չիք ոք որ երկմտիցէ ընդ ճշմարտութիւն բանիցն ձերոց։

Ասասանօր դարձեալ ի վկայութիւն կոչէք զերանելին Լեւոն, ի ցուցանել թէ սուրբն Պետրոս ունի զտեսչութիւն տիեզերական Եկեղեցւոյ յանձին յաջորդացն իւրոց։ Դարձեալ ասեմ, Սրբազան Հայր, թէ Եպիսկոպոսն այն Հռովմայ ոչ երբէք ուսուցեալ է զվարդապետութիւնն զոր ընծայէք դուք նմա։ Գովաբանէ նա զսուրբն Պետրոս, բարձրացուցանէ զեկեղեցին Հռովմայ զպատուեալն մարտիրոսութեամբ զլխաւորի առաքելոցն, բայց ոչ երբէք ընծայէ սրբոյն Պետրոսի իշխանութիւն ինչ վերագոյն քան զայլոցն առաքելոց. ոչ երբէք ասէ նա՝ թէ եպիսկոպոսն Հռովմայ զօրութեամբ կարծեցեալ ժառանգութեան առաքելոյն ունիցի իշխանութիւն ինչ տիեզերական յԵկեղեցւոջ։ Ուստի և չէ մարթ ստուգութեամբ ի վկայութիւն կոչել զնա ձերումդ կարծեաց։

Ի վերջոյ ասէք դուք ի կոնդակին ձերում բանս ինչ հանգունատիպս ասացուածոյ իմիք սրբոյն Երանոսի, և այլափոխէք զայն անարժան եղանակաւ։

Ցաղագս այսորիկ ասէք, այս ինքն է ի պատճառս յաջորդութեան սրբոյն Պետրոսի, յամենայն ժամանակս հարկ եղեալ է զի Եկեղեցին ողջոյն, այս ինքն հաւատացեալք ամենայն աշխարհաց դիմեսցեն յԵկեղեցին Հռովմէական՝ ի պատճառս հզօրագոյն գլխաւորութեան նորա։

Սուրբն Երանոս ոչ խօսի զյաջորդութենէ սրբոյն Պետրոսի յԵկեղեցւոջն Հռովմայ, այլ միայն զընդհանրական աւանդութենէ յԵկեղեցւոջ. ասէ նա՝ թէ ոչ կարելով առաջի առնել ի մատենի իւրում զաւանդութիւն ամենայն Եկեղեցեաց, ընտրեալ առնու ի նոցանէ զերիս գլխաւորս, զՀռովմայն, զԵփեսոսին և զՄիւռնայ։ Եկեղեցին Հռովմայ յայն սակս իսկ նշանաւոր է քան զայլսն, զի քաղաքն այն մայր լինելով քաղաքաց կայսերութեանն, Եկեղեցին ողջոյն՝ այս ինքն են հաւատացեալք ամենայն աշխարհաց անդր դիմէին։ Այսպէս ահա

աւանդութիւն Եկեղեցւոյն Հռովմայ էր իբրու բովանդակութիւն իմն աւանդութեան համօրէն Եկեղեցւոյ. քանզի առաքելական աւանդութիւն և հաւատ պահեալ էին ի նմա ի ձեռն հաւատացելոց ամենայն աշխարհաց։

Ապա ուրեմն դուք, Սրբազան Հայր, բոլորովին այլ ընդ այլոյ իմաստ ընծայեալ էք բանից սրբոյն Երանոսի։ Այն չէ շատ, այլ և յաւելուք իբրև բանս Երանոսի զառաջիկայսդ, զոր չիք բնաւ նորա ասացեալ. «Որպէս զի յաթոռս յայս, յորմէ պատուական հաղորդակցութեանն իրաւունք յամենեսեան զեղեալ ընթանան հանգոյն անդամոց ի գլուխ անդր կցորդելոց, ի մի միաբանութիւն մարմնոյ յարեսցին»։

Եւ իցէ՞ արդեօք հնար, Սրբազան Հայր, զի դուք հաւանեալ իցէք ձեռնադրել զկոնդակ մի՝ յորում այդպիսի խարդախանք գտանին։ Աներկիւղ համարձակութեամբ ասեմք մեք՝ թէ ամենայն իմն է այլափոխելդ ձեր այդպէս զզրուածս պատկառելի վարդապետաց՝ առ ի կցորդս առնելոյ զնոսա մոլորութեանցն ձերոց։ Բազումք խառնավար արարին ի Հռովմէական Եկեղեցւոջ զբան սրբոյն Երանոսի. բազում անգամ չարաչար թարգմանեցին զայն և չարաչար մեկնաբանեցին՝ առ ի գտանելոյ ի նմին զկերպարանս ինչ կարծեաց նպաստաւորս պապական իշխանութեան. բայց ոչ երբէք և ոչ ուրեք այլափոխեալ էին զայն այդքան անարժան եղանակաւ՝ որպէս դուքն արարիք ի կոնդակիդ ձերում։

Մի՛ւս ևս վկայութիւնքն զոր ի մէջ բերէք՝ չեն ինչ ձեզ աւելի քան զայլսն նպաստաւորք։ Եւ սակայն յայնպիսում կարևոր գրուածի, որպիսի է կոնդակդ ձեր, ի մէջ բերէք զուք զնոսին իբրև զՀզօրագոյն փաստս յապացոյց առաջարկութեան ձերոյ։ Ցորմէ դիւրին է ի միտ առնուլ՝ թէ որքան ունէիք իրաւունս ասելոյ՝ թէ Եկեղեցին յամենայն ժամանակի ի ձեռն վարդապետաց իւրոց ուսուցեալ իցէ զվարդապետութիւնն զոր դուք առաջի արարիք։

Քաջայայտ է իբրև զլոյս արեգական՝ զի աւանդութիւնն Եկեղեցւոյ դատապարտ առնէ զձեզ, որովհետև չկարէք դիմել

յումանս ի յիշատակաց Նորին առանց խարդախեցոյ զնոսա։

Ե.

Եւ արդ այր ոք բարեմիտ չկարէ ընաւ խելամուտ լինել՝ թէ զիա՞րդ կարողացայ՛ք դուք ի խօսել անդ զզօրութենէ և զպատճառաց առաջնութեան քահանայապետին Հռովմայ ասել համարձակ՝ թէ ի ձեր կողմն իցեն վկայութիւնք սուրբ գրոց և վճիռք եպիսկոպոսաց Հռովմայ և տիեզերական ժողովոց։ Նախնի եպիսկոպոսունքն Հռովմայ, որք ի գրի հարեալ են ըզվարդապետութիւն իւրեանց, ի սրբոյն Կղեմայ մինչև ի մեծն Գրիգոր, դատապարտ առնեն զձեզ։ Դատապարտեն զձեզ եօթն ժողովքն տիեզերականք, դատապարտէ զձեզ սուրբ գիրքն։ Այլ և վճիռ ժողովոյն Փլորենտիոյ՝ զոր դուքն Նորոգէք, դատապարտ առնէ զձեզ։

Երկու մասունք են այնր վճռոյ. առաջին այն՝ որ տայ պապից անուանս պատուոյ հոյակապս, որք որպէս թէ եկեալ ի ջեալ իցեն առ նոսա ի սրբոյն Պետրոսէ. և երկրորդն այն՝ որ ունի զայս ամփոփումն սոսկալի. «Համաձայն սահմանաց և սրբազան կանոնաց տիեզերական ժողովոց»։

Այս ամփոփումն գործ է արևելեայցն ոմանց որ դտան ի ժողովն անդ։ Քանզի կամելով նոցա վախճան առնել ժողովոյն, յորում՝ ոչ ունէին ազատութիւն և ոչ մի, այլ և պարտասեալ զոլով ի բռնութեանց և յանարժան գնացից պապիցն ընդ նոսա, հաւանեցան կերպարանօք իմն ընդունել զպապականն վարդապետութիւն. բայց և զայնպիսի յաւելին ամփոփումն բանից՝ որ ի չիք դարձուցանէ իսպառ զհաւանութիւն իւրեանց. իբր զի քաջայայտ իսկ է՝ զի տիեզերական ժողովքն դատապարտ առնեն զանուանս պատուոյ՝ զորս պապն ընծայէր անձին իւրում յառաջնումն մասին այնր վճռոյ։ Ապա ուրեմն արևելեայքն ծաղր արարին զՀռովմ՝ մինչև դատապարտ ևս առնիցեն զնա յորժամ ի ձեռս բերցեն զաղատու-

թիւն իւրեանց։ Այսքան է ահա զօրութիւն վճռոյն այնորիկ նորոգելոյ առ ի ձէնջ. և դուք ոչ իմացեալ զխորհուրդ ամփոփման արևելեայցն՝ ի զրի հարիք զայն ի դատապարտութիւն ձեզ։

Խրոխտացեալ ձերովքդ ողորմելի փաստիւք՝ պանծայք ուսուցանել և յայտ առնել, որպէս թէ տեառն տնօրէնութեամբ Եկեղեցին Հռովմէական ունիցի ի վերայ այլոցն ամենայն Եկեղեցեաց զառաջնութիւն հասարակ իշխանութեան, և թէ այս իշխանութիւն իրաւասութեան քահանայապետին Հռովմայ ստուգիւ եպիսկոպոսական է, և անմիջապէս ստացեալ ունիցի զայն։

Այդ ասացուածք ձեր, Սրբազան Հայր, յուշ ինձ արկանէ զբանս միոյ ուրուք ի նախնի եպիսկոպոսացն Հռովմայ, Գրիգորի ասեմ մեծի, որ սեղանակապութիւն իմն համարէր զընծայելն անձին զեպիսկոպոսութիւն ի վերայ համօրէն Եկեղեցւոյ։ Ընդ զրչաւ նորա զիզաբարգեալ կուտակեցան բանք ահագինք ի նկարագրել զամբարտաւանութիւն առն՝ որ յանդգնիցի թեւակոխել յեպիսկոպոսութիւն այնպիսի։ Եւ սակայն դուք, Սրբազան Հայր, ընծայէք զայն անձին ձերում։ Զեռներէց լինելով յեպիսկոպոսութիւն տիեզերական՝ դուք, Սրբազան Հայր, ըստ բանից մեծին Գրիգորի գտանիք լեալ նէոն և պրոտոեակ և սատանայ։ Ոչ եթէ ես ինչ եմ՝ որ զտիտղոսսդ զայդոսիկ տամ ձեզ, այլ բերանն յորմէ ելեալ են բանքդ այնպիսի՝ ունի իշխանութիւն, զորոյ դժուարաւ կարէք ուրանալ զզօրութիւնն։

Որպէս զի մի՛ ոք հակառակեսցի ասացուածոյն ձերում, սկսանիք դուք ասել՝ թէ հովիւքն, որպիսի՛ և իցեն արարողութիւնք նոցա և աստիճանք, պարտական են հնազանդել ձեզ իբրև հպատակք, ոչ ինչ ընդհատ ի հաւատացելոց. թէ հնազանդութիւն նոցա ձզի ոչ միայն յիրս հաւատոյ և վարուց, այլ և յամենայն բարեկարգութիւնս և ի տեսչութիւն Եկեղեցւոյ, և թէ այս պարտիք հնազանդութեան տարածեալ ձգին ընդ ամենայն երկիր։ Եւ այսպէս համարիք դուք, Սրբազան

Հայր, զանձն ձեր բացարձակ տէր և իշխան ամենեցուն յամենայնի և ամենայն ուրեք. ապա ուրեմն և աստուած ոչ իւիք ի վեր է քան զձեզ։

Ըստ ձերումդ կարծեաց՝ յայսմ տիեզերական դերագահութեան հաստատեալ կայ միութիւնն Եկեղեցւոյ և այսու կատարի ասացեալն ի Փրկչէն, «Մի հօտ և մի հովիւ»։ Զայս Քրիստոսի է ասացեալ Որդւոյն Աստուծոյ զանձնէ իւրմէ, և դուք համեստութեամբ իմն ընծայէք անձին ձերում։ Ապա ուրեմն չիք երկբայութիւն՝ զի Աստուած համարիք զանձն ձեր։

Յետ յառաջ բերելոյ զայսպիսի սրբապիղծ վարդապետութիւն՝ պնդէք դուք թէ այս իսկ իցէ կաթուղիկէ ճշմարտութիւն, յորմէ ոչ ոք կարէ խոտորել՝ եթէ կամիցի ունել զդաւանութիւն ճշմարիտ և հաստանել ի փրկութիւն։ Ապաքէն պարտ էր ձեզ յուշի ունել՝ թէ Աստուծոյ միայն է առնել զդատաստան։ Եթէ ճշմարիտ ևս լինէին բանք ձեր, ոչ ունէիք դուք իրաւունս դատելոյ և ոչ զոք. ևս առաւել չունէիք իրաւունս դատապարտ առնելոյ։ Եւ զի առնէք, յափշտակէք ահա և զնոր իրաւունս՝ որ անկ է Աստուծոյ միայնոյ։

Ձեր դուշակեալ իմն է զառարկութիւնն զոր ի վեր անդր արարի ձեզ, թէ զի՞ է զի սեպհականէք անձին ձերում զեպիսկոպոսութիւն. որոյ վասն ի վերայ ածէք՝ թէ եպիսկոպոսունքն են ճշմարտիւ հովիւք՝ յաջորդք առաքելոց, և թէ չկամիք դուք բնաւ նուազել զիշխանութիւն նոցա. և առ այս վկայ ի մէջ բերէք զմեծն Գրիգոր, և զթուղթ նորա առ Եւլոգիոս Աղէքսանդրացի։ Ապա ուրեմն ճանաչէք դուք, Սրբազան Հայր, զգեղեցիկ թուղթն զայն, յորում բացայայտ բանիւք դատապարտի ձեր վարդապետութիւն. և սակայն համարձակիք ի մէջ բերել անտի խօսս քանի մի յամփոփեալ միտս, այս ինքն է նովին ոճով՝ որով ի մէջ բերէք և զայլս ի վկայութեանց։ Բայց եթէ ընթերցեալ էր ձեր զթուղթն ողջոյն, մի թէ իշխէի՞ք առանց շառաչնեցոյ այլափոխել զիմաստս բանիցն զորս ածէք ի մէջ։ Մեծն Գրիգոր ասէր յայտնապէս. «Ես զնոյն եպիս-
» կոպոսութիւն ունիմ զոր և այլքն յեպիսկոպոսաց. և մի՛ եր-

,, բէք լիցի ինձ յանձն առնուլ զոր և է անուն պատուոյ, որ
,, թուիցի մեղանչել իրաւանց եպիսկոպոսութեան եղբարցն ի-
,, մոց և ընկերակցաց։ ,, Իսկ դուք ասէք. Ես եմ Ճշմարիտ
եպիսկոպոս տիեզերական. այլ ամենայն եպիսկոպոսունք հրպա-
տակք իմ են, և ինձ պարտին հնազանդել յամենայնի. միայն
թէ չկամիմ զի հովուական իշխանութիւն նոցա նուազութիւն
ինչ կրեսցէ։ Եւ զիաւրդ համարիցիք դուք՝ թէ ըստ սրբոյն Գը-
րիգորի բանիցն խօսիցիք։

Ոչ կամիք զի իշխանութիւն եպիսկոպոսաց նուազութիւն
ինչ կրեսցէ. բայց յի՞նչ միտս։ Եպիսկոպոսունքն են նուիրա-
կրք ձեր և փոխանորդք. իշխանութիւն նոցա ձերդ իսկ իշխա-
նութիւն է, զոր հաղորդէք նոցա որքան և ախորժիցէք։ Իշ-
խանութիւնն եպիսկոպոսական եթէ նուազեսցի ինչ իւիք, նուա-
զի անշուշտ և ձերն։ Այսպէս ահա կամիք դուք պատկառելի
գործել զիշխանութիւն եպիսկոպոսաց։ Եւ զիաւրդ համարիցիք
խօսել ըստ բանից սրբոյն Գրիգորի։

Կամիք դուք, Սրբազան Հայր, զի բացարձակ իշխանու-
թիւնն ձեր մի՛ իւիք խափանեսցի։ Ապա ուրեմն զեր ի վերոյ
ամբառնայք զանձն ձեր քան զամենայն աշխարհական իշխա-
նութիւնս. դատապարտ առնէք զամենայն քննութիւն՝ զոր իշ-
խանութիւնքն այնոքիկ կամիցին առնել գործոցն ձերոց և դա-
տաւճռոց. դատապարտ առնէք զամենեսեան որք միանգամ
իշխիցեն խորհել և ուսուցանել՝ թէ աշխարհական իշխանու-
թիւնք ունիցին իրաւունս ինչ խափանելոյ երբէք զգործադ-
ութիւն իշխանութեան ձերոյ, և զհրամանս զորս տայցէք
հովուաց և հաւատացելոց։ Կամիք դուք կազմել պետութիւն
ինչ մեծ տիեզերական, որոյ գլուխ իցէ ձերդ իշխանութիւն,
և ձերդ օրէնք, և հակառակ ելանիցէ այն որում և իցէ իշխա-
նութեան՝ որ համարձակիցի զփոքրագոյն ինչ անգամ արգելս
ընդդէմ դնել գործադրութեան ձերումդ գերագոյն հրամանի։

Էր երբեմն զի նախորդքն ձեր դաշինս համաձայնութեան
կռէին ընդ աշխարհական պետութեանց, և կէտ նպատակի դա-
շանցն այնոցիկ էր գործադրութիւն իշխանութեան նոցա՝ բա-

բեխառնեալ իրաւամբքն զոր ունէին պետութիւնքն այնոքիկ։ Դուք ինքնին եւ արարիք ոչ սակաւ դաշինս համաձայնութեան, որք վիժածից նմանեցին. քանզի խնդրէիք յայտ յանդիմանութեամբ նուաճել զքաղաքականն իշխանութիւն ընդ ձերովդ։ Իսկ յաւուր յայսմիկ պատառէք դուք զամենայն դաշնագիրս, և զեր ի վերոյ անցանէք քան զամենայն պետութիւնս և զկառավարութիւնս նոցա և զօրէնս։ Ի ձերումդ տիեզերական թագաւորութեան ամենայն պետութիւն, որչափ և մեծ իցէ, գաւառ մի և եթէ է ի ձերոց գաւառացդ. և որք իշխիցեն նոցին՝ ոչ այլ ինչ պարտին լինել՝ եթէ ոչ փոխանորդք ձեր ըստ ժամանակաւորին, որպէս և եպիսկոպոսունքն ըստ հոգևորին։ Զիք և չիք երբէք մարդկեղէն ամբարտաւանութեան հասեալ յայդ չափ աստիճանի։

Եւ զի մի՛ ինչ մնայցէ տեղի երկբայութեան զընդարձակութենէ իշխանութեանն զոր ընծայէք անձին ձերում, վճիռ հատանէք վկայութեամբ բանից Պիսոի Զ, երկրորդի ժողովոյն Լուգդունի, և Նիկողայոսի Ա, թէ քահանայապետն Հռովմայ գերագոյն դատաւոր է հաւատացելոց, թէ յամենայն եկեղեցական խնդիրս մարթ է դիմել ի դատաստան նորա, թէ իշխանութիւն առաքելական ամենուրեան գեր ի վերոյ է այլոցն ամենեցուն, և չէ մարթ մերժել կամ ընդ քննութեամբ արկանել զդատաստանս նորա, և թէ ոչ է հնար և ոչ իսկ բողոք ունել զդատողութեանց պապիցն ի ժողով տիեզերական իբրև յիշխանութիւն վերագոյն քան զքահանայապետին Հռովմայ։

Այսպէս ուրեմն ունել ունիք դուք զբացարձակ իշխանութիւն՝ ոչ միայն իբրև զթագաւոր, այլ և իբրև զդատաւոր, զամենայն ասեմ իշխանութիւնս սահմանադրականս, օրէնսդրականս և դատաւորականս՝ ամենայն լրութեամբ նոցին ազատ յամենայն քննութենէ։

Ինքն իսկ Աստուած ոչ է ցուցեալ երբէք զայդքան պահանջմունս։ Նորա կամք թագաւորել ի վերայ մարդկան ազատաց, և ի ստեղծանել իւրում զնոսա տուեալ է նոցա զազատութիւն իբրև զէական ինչ մասն բնութեան նոցա։ Իսկ դուք

կամիք ստրուկս ունել Հպատակս և Հնազանդս՝ ընդ սպառնալեօք ի կորուստ դնալոյ նոցին և կամ՝ մահու մեռանելոյ։

Է.

Մինչև ցայժմ ի ձեռներիցութիւնս մեծամեծս թեւակոխեցիք դուք, Սրբազան Հայր։ Ոմանք ի նախորդացն ձերոց արդէն զնոյն արարեալ էին ըստ ամենայնի կամ ըստ մասին. և մեք կամակար մտօք Հաւանիմք՝ թէ դուք Հրապարակաւ յայտ արարիք և եթէ զայն ինչ՝ որ միշտ եղեալ էր հիմնական դաղափար պապիցն։

Չեզ վերապահեալ էր աւելի ինչ ևս առնել, և պսակել զշինուածն ամբարտաւանութեան զոր պապքն աշխատ եղեն կանգնել ի հաղար ամաց հետէ։ Եւ զայս արարիք ի գլուխն մակագրեալ ի ձէնչ յաղագս անսխալ վարդապետութեան փանանայապետին Հռովմայ։

Սկիզբն առնէք բանիցն ձերոց այնպիսի և այնքան անճոռնի ասացուածով, զի հարկ է բազում անգամ ընթեռնուլ զայն առ ի հաւատալոյ նմին։ Քանզի ասէք. յամենայն ժամանակի սովորութիւն Եկեղեցւոյ, վճիռք տիեզերական ժողովոց, մանաւանդ այնոցիկ՝ որք եղեն մինչդեռ արևելք և արևմուտք ի միութեան էին, յայտ առնեն թէ իշխանութիւնն վարդապետական իբրու հետևութիւն իմն է առաջնութեան՝ զոր ունի քահանայապետն Հռովմայ ըստ որում՝ յաջորդ սրբոյն Պետրոսի առաքելոցն պետի։

Հաստատուն սովորութիւն տիեզերական Եկեղեցւոյ, և սահմանք եօթանեցունց տիեզերական ժողովոց՝ որք զԵկեղեցին առաջի առնէին, ոչ միայն չասեն ընաւ թէ եպիսկոպոսն Հռովմայ ունեցի զվարդապետականն իշխանութիւն, այլ և ոչ զայն ասեն՝ թէ ունի զառաջնութիւն իշխանական։ Եւ այս այնպէս քաջայայտ է այնոցիկ որք փոքր ի շատէ գիտակ իցեն պատմական և վարդապետական յիշատակարանաց Եկեղեցւոյ յութեակ դարսն առաջինս, զի ոչ որ ոչ կարէ բանաւորա-

պէս երկմտել զայսմանէ։ ԶիաՀրդ ապա արժան իցէ իմանալ զերկոսին ասացուածս ձերոյ Սրբազնութեանդ, թէ քահանայապետն Հռովմայ ունէր ըստ հասարակաց վկայութեան զառաջնութիւն իշխանական, և թէ իշխանութիւնն վարդապետական կամ վարդապետութիւնն համարեալ էր ընդհանրապէս իբրև հետևութիւն նորին։

Դուք ինքնին իսկ գիտէք՝ թէ չէ այդ այդպէս. քանզի առ ի գտանելոյ նմին փաստս՝ հարկադրեալ էք իջանել մինչև ցիններորդ դար, մինչև ցԺողովակ մի հաւաքեալ ի խաբերայից ոմանց սադրանօք եպիսկոպոսին Հռովմայ. զոր և կոչէք դուք պանծալի անուամբս չորրորդ տիեզերական Ժողով Կ. Պոլսոյ։ Ժողովակն այն, զոր Եկեղեցին Հռովմէական յամառեալ պնդի անուանել ութերորդ Ժողով տիեզերական՝ ոչ երբէք ընկալեալ է յարևելեան Եկեղեցւոջ, այլ կոչի անարժան ՝՝՝՝՝՝։ և սակայն դուք ի վկայութիւն կոչէք զայն, որպէս թէ առաջի առնիցէ զարևելս՝ որպէս և զարևմտեան քրիստոնեայս։

Դիմելն յապացոյց այդպիսի՝ խոստովանել է թէ չիք ի միջի բնաւ այլ ինչ ապացոյց, և թէ անճառնի ասացուածն ձեր զուրկ է յամենայն պատմական հիմնաւորութենէ, թէպէտ և ջանայցէք դուք գտանել ինչ այնպիսի։

Այլ և ոչ ժողովն այն զոր ի վկայութիւն կոչէք՝ սահմանեալ է վարդապետութիւն ինչ այնպիսի։ Ասել ասէ ժողովն զայս ինչ՝ իբրև զիրական ինչ պատահումն՝ թէ մինչև ցաւուրըս իւր վարդապետութիւնն հաւատոյ անխառն մնացեալ է ի Հռովմէական Եկեղեցւոջ։ Եւ միթէ մի և նո՞յն ինչ իցէ ասելն զիրական ինչ դէպս, և ճանաչելն զիրական ինչ։ Մի թէ ժողովդ այդ Կ. Պոլսոյ ասացեա՞լ իցէ երբէք՝ թէ Եպիսկոպոս ոք Հռովմայ ոչ բնաւ անկցի ի հերետիկոսութիւն։ Ոչ։ Ասացեա՞լ իցէ թէ նորա են իրաւունք վարդապետելոյ յԵկեղեցւոջ։ — Ոչ բնաւ։ Ապա զիաՀրդ կոչիցէք զնա ի վկայութիւն բանից ձերոց։ Դիցուք թէ ճշմարտիւ խոստումն Քրիստոսի վասն հաստատութեան սրբոյն Պետրոսի ի հաւատս կատարեցաւ արդեամբք յա-

ռաքելական աթոռն Հռովմայ մինչև ցիններորդ դար (որ չէ այնպէս. միթէ զՀետ գայցէ՞ ի բանէ այտի թէ Ժողովն այն սահմանեալ է՝ թէ աթոռն այն ոչ երբէք պակասեսցի ի խոստմանէ անտի։ Զայդ չիք նորա ասացեալ։ Եւ ընդէ՞ր ապա ընծայէք նմին սահման այնպիսի։ Յօգնականութիւն ձեզ կարդայք զվկայութիւն մի անզօր ամենևին, և խարդախէք զիմաստ բանիցն զոր առնուք ի նմանէ։

Պնդէք դուք՝ թէ յերկրորդումն Ժողովին Լուգդունի Յոյնք դաւանեցին՝ թէ Հռովմէականն Եկեղեցի ունի զառաջնութիւն ընդհանրական, և թէ հարկ է խնդրոց հաւատոյ առնուլ ըստ սահման դատաստանաւ նորին։ Եւ զի՞ է զի ասէք ընդհանրապէս Յոյն+, մինչդեռ յայտնի իմն է՝ զի սակաւաթիւ արեւելեայքն ածեալք ի Լուգդուն ի Կայսերէն վասն շողոքորթելոյ պապին, և ընդունելոյ ընդ նորա ձեռն զօգնականութիւն արևմտից ընդդէմ Ցաճկաց, ոչ էին բնաւ պատգամաւորք արևելեան Եկեղեցւոյ, և ոչ առաջի առնէին զնա։ Մի թէ ո՞չ գիտիցէք՝ զի արքն այն սոսկականք սակս այնորիկ և եթ տեղի ետուն բանից ինչ պապին, զի կամակատար լինիցին կայսերն, և թէ արևելեան Եկեղեցին ողջոյն մերժելով մերժեաց զնոսա։ Ապա ուրեմն զիա՞րդ կարողացայք դուք զվճիռ երկրորդի Ժողովոյն Լուգդունի առաջի առնել իբրև զսահման ինչ սեպհական արևելից և արևմտից առհասարակ։

Դարձեալ, աւանիկ ըստ ձերումդ սովորութեան խարդախեալ էք և զիմաստ սահմանի երկրորդի Ժողովոյն Լուգդունի։ Ոչ ցուցանէք դուք՝ թէ յորո՛ւմ տեղւոջ գործոյ Ժողովոյն գտեալ իցէ ձեր զբանսն զորս ի մեջ բերէք։ Ընդէ՛ր արդեօք. քանզի չիք ինչ այնպիսի անդանօր՝ որպիսի դուքն կամիք։ Շատ իսկ է յանն արկանել զգործս Ժողովոյն այնորիկ ի հաւաստիս բանից։ Եթէ Ժողովն այն ունէր ինչ բնաւ զօրութիւն, թերևս աշխատ լինէի ես հաստատել զբանս իմ. այլ քանզի ոչ ունի բնաւ ամենևին զօրութիւն ինչ ի մասին ընդհանրական դաւանութեան Եկեղեցւոյ, ի զուր իցէ ինձ ժամանակաւ լինել ի հերքումն սահմանաց նորին։

Զհետ ժողովոյն Լուգդունի ի մէջ բերէք զժողովն Փլորենտիոյ, բայց կարճ ի կարճոյ և եթ, և ի բաց թողուք զհաշտակաւոր ամփոփումն՝ որ իսպառ իսկ չէքացուցանէ զվճիռ նորին։ Քաջ քաջ զգուշանայք ապաքէն չասել՝ թէ զայն վճիռ ձեռնադրեցին ոմանք միայն ի Յունաց անտի եկեալց ի դիմաց արևելեան Եկեղեցւոյ. թէ նոքա սոսկալի բռնութիւնս կրեցին ի կողմանէ պապին. թէ ընդ գնալ իւրեանց յաղատութիւն՝ ուրացան զայն ամենայն զոր ինչ արարեալ և ձեռնադրեալ էին. թէ դատապարտ եղեն նոքա յԵկեղեցւոյն Յունաց առհասարակ, որ մի միայն աւանդապահ վարդապետութեան իւրոյ Յանեաւ զիմաստունն և քաջակորով Մարկոս Եփեսացի, որ ոչ ձեռնադրեաց և ոչ ի միումն ի վճռոց Փլորենտիոյ, և բողոքեաց ընդդէմ կեղծ ժողովոյն այնմիկ։ Ապա ուրեմն եթէ ժողովն Փլորենտիոյ լինէր ևս ի կողմն ձեր, զո՞ր իշխանութիւն կամ զօրութիւն ուղղափառութեան մարթ էր ընծայել նմին։

Եթէ կամք էին ձեզ ապացուցանել՝ թէ Եկեղեցի՛ քն արեւելից և արևմտից ճանաչէին զվարդապետականն իշխանութիւն եպիսկոպոսին Հռովմայ, պարտ էր ձեզ ի մէջ բերել զգործս եօթանց տիեզերական ժողովոց, որք ի դիմաց համօրէն Եկեղեցւոյ խօսեցան յութեսին դարսն առաջինս։ Բայց զուք չարարիք զայդ, զի և անհնարին իմն էր։ Ժողովքն այնքիկ պատկառելիք սահմանեալ հաստատեցին զաստիճան եպիսկոպոսին Հռովմայ յեկեղեցական դասակարգութեան. հաւանեցան ընդ ողջմտութիւն վարդապետութեան նորա՝ մինչդեռ էրն ուղղափառ, և դատապարտ արարին զնա յորժամ եղև հերետիկոս։ Զայս հաստատեն աւասիկ գործք և սահմանք նոցին։ Եւ զուք վասն այսորիկ խոհական մտօք լուեցիք զնոցանէ։

Յետ իմէջ բերելոյ զերիս ժողովս միջնոյ դարուն, որք չունին ինչ զօրութիւն ապդեցութեան, և չհաստատեն իրօք զայժմու ձեռներիցութիւնս ձեր, անցանէք ի գործնական սովորութիւն Եկեղեցւոյ։

Երկու ինչ ասէք ամենայն հաստատութեամբ. նախ, թէ նախորդքն ձեր ցանգ խնամ կալեալ իցեն ուսուցանել և տա-

բածել զողջամիտ վարդապետութիւնն բաղմապատիկ հնարիւք. և երկրորդ՝ թէ յամենայն Եկեղեցւոջ ամենեքեան առ Նոսա զիմէին՝ սակս անխառն պահպանութեան այնր վարդապետութեան։ Երկոքին ևս ասացուածքդ ստոյ սուտ են ամենևին։

Անդստին յիններորդ դարէ հետէ՝ յորում բաժանեցան Նոքա յարևելեան Եկեղեցւոյ, և սկսան թևակոխել ի տիրապետութիւն ի վերայ արևմտեան Եկեղեցւոյ, նախորդքն ձեր աշխատ եղեն տարածանել վարդապետութիւնս խեղաթիւրս ի ձեռն ամբոխապարտ խարդախանաց։ Նոքա ետուն հնարել զստայոգ կոնդակագիրսն, որպէս զի զյատիշտակութիւնսն յերաղեալս յինքեանց հիմնաւորեսցեն ի վերայ վաղնջուցն աւանդութեանց։ Նոքա ետուն զօրինակ ամբոխալի խարդախութեանցն այնոցիկ՝ որք գործեցան յարևմուտս ի միջին դարու ի զրուածքս հարցն սրբոց, և ի պատուական յիշատակարանս աւանդութեան Եկեղեցւոյ։ Սոսկալիթխար ջանից բազմահմուտ արանց նորոցս ժամանակաց պէտք եղեն առ ի մաքրելոյ և զբտելոյ զյիշատակարանսն զայնոսիկ ի խարդախանացն զորս միանձունքն ընդօրինակողք մուծեալ էին ի Նոսա. որք և առհասարակ վառեալ էին ցանկութեամբ բարձրացուցանելոյ զիշխանութիւն եպիսկոպոսին Հռովմայ։

Մինչդեռ խաւարային այս աշխատութիւն ի գլուխ ելանէր, նախորդքն ձեր այլափոխէին զհանգանակն նախնի հաւատոյ, յեղաշրջէին զխորհուրդն հաղորդութեան ի կարգադրութենէ անտի զոր սահմանեալ էր Քրիստոս, փոխէին զառաքելադիր արարողութիւնս մկրտութեան, պղծէին նորաձևութեամբք ըղմատակարարութիւն այլոցն սրբազան արարողութեանց, վճիռս հանէին այլանդակս ըստ հաճոյս քմաց իւրեանց, էր զի և ծաղրականս անգամ։ Եւ դուք իբրև արժանաւոր նմանողք նոցին՝ հրատարակեցիք աւասիկ երկուս վարդապետութիւնս նորս, զորս և ոչ իսկ արևմտեանն Եկեղեցի լուեալ էր բնաւ երբէք։ Ահա վաստակեցիք դուք և նախորդքն ձեր ուսուցանել և տարածանել զողջամիտն վարդապետութիւն։

ճշմարի՞տ իցէ զոր ասէքն՝ թէ առ նոսա դիմէին վասն անվթար պահպանութեան վարդապետութեանն այնորիկ։ Բեր տեսցուք զփաստս ձեր։

Ի վկայութիւն կոչէք զԹուղթ սրբոյն Կիւրղի Աղեքսանդրացւոյ առ Կելեստինոս Հռովմայ եպիսկոպոս, զԹուղթ եպիսկոպոսին Հռովմայ Ինոկենտիոսի Ա, առ ժողովս Կարթագինոյ և Մելևիոյ, զԹուղթ մի Բեռնարդոսի արքայի Պայծառաձորոյ վանից, և զԹուղթ Աղաթոնի Հռովմայ եպիսկոպոսի առ Կայսրն, Թուղթ հաստատեալ ի վեցերորդ տիեզերական ժողովոյն։ Եւ զի՞նչ ինչ կայցէ ի գրուածսդ յայդոսիկ։

Նախ՝ թէ վասն տալոյ սահմանի իմիք զընդհանրականութիւն՝ հարկ էր արևելից և արևմտից համաձայնս լինել իրեարաց։ Երկրորդ՝ թէ աթոռն Հռովմայ, որ մի միայն աթոռ պատրիարքութեան է յարևմուտս՝ պարտի համաձայն լինել պատրիարքական աթոռոցն արևելից։ Երրորդ՝ թէ հարկ է ուրեմն խորհուրդ հարցանել ի նմանէ՝ ոչ թէ վասն այնորիկ իբր թէ ունիցի իշխանութիւն ինչ գերագոյն, զոր ոչ ոք ընդ միտ անգամ՝ անցուցանէր, այլ զի նա առաջի առնէր զարևմուտս։ Ոչ այլ ինչ գտիք դուք վարդապետութիւն ի գրուածս ժամանակացն եղելոց յառաջ քան զդարն Թ։ Իսկ ըզվկայութեանց յետնագոյն ժամանակաց, որպիսի է Բեռնարդոսին Պայծառաձորեցւոյ, յիշատակութիւն անգամ առնել չկամիմ ես. քանզի ոչ ունին նոքա և ոչ զմի տիպ կերպարանաց ընդհանրականութեան։ Միայն թէ աղաչեմ զձերդ Սրբազնութիւն՝ ընթեռնուլ ի գրուածս Բեռնարդոսի զայլ ինչ ամենեւին քան թէ զքանի մի տողն զայնոսիկ. քանզի անդ տեսանիցէք ճշմարտութիւնս բազումս ասացեալս ի դէմս պապից, և զհերքումն կարծեցեալ վարդապետութեանն՝ զոր հրատարակեցիք զանարատ յղութենէ։

Ի զարմանալի փաստիցն ձերոց յառաջ բերէք՝ թէ կնիքն ճշմարտութեան և անպակասելի հաւատոյ շնորհեցաւ Պետրոսի և յաջորդաց Նորա, որք ընկալան զպաշտօն ի բաց մաքրելոյ զմոլորութիւնս յԵկեղեցւոյ, ուսուցանելոյ ի նմա ըզճշմար-

տութիւն, և պահելոյ զայն ի միութեան՝ ազատ յամենայն բաժանմանէ։

Սրբազան Հայր, եթէ արդարև շնորհդ այդ պարգևեցաւ պապիցն յԱստուծոյ, ապա զի՞նչ է զի նոքա այնպէս չարաչար վարեցան դովաւ։ Ցութեսին դարձն առաջինս Եկեղեցին համարէն ի միութեան էր. յիններորդումն սկսանի բաժանիլ յերկուս մասունս, յարևելեան և յարևմտեան։ Դիւրին էր ինձ ապացուցանել՝ թէ Եպիսկոպոսունքն Հռովմայ եղեն պատճառք հերձուածոյն. այլ զի մի՛ մտանիցեմք ի քննութիւն այդր խընդրոյ, այս ինչ յայտնի է՝ թէ չկարէաք ուրանալ զի պապքն ոչ կարացին արգելուլ զայն։

Ի ԺԴ դարուն ամենայն Եկեղեցիք արևմտից ճանաչէին զգերագահութիւն պապին. իսկ ի ԺԵ դարու Եկեղեցիքն այնոքիկ կիսով մասամբ անջատեցան ի նմանէ։ Թողեալ ըղձնդիրն՝ թէ արդեօք պապքն ոչ եղեն պատճառք ըստ մեծի մասին այնր բաժանման, ապաքէն անժխտելի իմն է՝ զի չկարացին նոքա զառաջս ունել բաժանմանն։ Այլ և յայնոսիկ յԵկեղեցեացն արևմտից, որք մնացին ի միութեան ընդ պապին, մարթ է ցուցանել բազմաթիւ երկպառակութիւնս զէական մասանց դաւանութեան, մանաւանդ զպապական իշխանութենէ, և զկանոնական հրամանաց զորս իշխէ պապն տալ Եկեղեցւոյ ի դիմաց Աստուծոյ։

Ամբաստանութիւն է ի բերանս ամենեցուն՝ թէ փառասիրութիւն պապիցն պատճառք եղեն այն ամենայն երկպառակութեանց. բայց մեք և զայդ խնդիր թողցուք ի բաց առանց քննելոյ։ Այս ինչ յայտնի է ստուգութեամբ, զի պապքն չկարացին խափանել զնոսին, և զարդիս և՛ քան զևս սաստկանան նոքին և զայրանան ի պատճառս կոնդակիդ՝ զոր առեալ է մեր ի քննել։

Եթէ պապքն ընկալեալ էին զշնորհս և զպաշտօն պահելոյ զմիութիւն Եկեղեցւոյ, և սնուցանելոյ զայն ճշմարտութեամբ, և չկարացին առնել ոչ զմին և ոչ զմիսն, երկու ինչ պատճառք մարթէին այդմ լինել. կամ այն զի խոստմունքն Աստու-

ծոյ չարին զկատարումն, կամ թէ խոստմունքն այնքիկ բնաւ իսկ չէղեն երբէք, որպէս ամենայն Եկեղեցիքն բաժանեալք ի Հռովմէ հաստատեն։ Եւ զոր արդեօք յերկուց ծայրից երկսայրաբանութեանդ ընտրեալ առնուցուք, Սրբազան Հայր։

Դուք ինքնին խոստովան լինիք՝ թէ սաստկապէս հակառակութիւն կրեն չափազանց պահանջմունքդ ձեր, և վասն այսորիկ իսկ հարկ համարեալ էք վերստին կրկնել զնոսին։ Եւ միթէ կարծիցէ՞ք, Սրբազան Հայր, թէ կրկնելովդ ձերով յաջողեսջիք ի խորհուրդս ձեր։ Դժուարին է ինձ ի միտ առնուլ՝ թէ մինչև ցայս աստիճան խաբէք դուք զանձն ձեր։ Հանդիսաւոր մեծաբանութիւնք յայտարարութեանն ձերոյ ոչ ազդեսցեն բնաւ ի վերայ ոչր ուրուք և իցէ. քանզի անցիք զանցիք դուք զնախորդսն ձերովք՝ որ այնքան չարիս հասուցին Եկեղեցւոյ, և չարիքն զոր դուք այժմ հասուցանէք նմին՝ մեծագոյն ևս եղիցին։

Սակայն ո՛րքան և ծանր իցէ մեզ միսել յողորմելին ձեր յայտարարութիւն հանդիսական, որ և կնիք է ձերումդ ողբալի կոնդակի, բեր մատիցուք ի քննութիւն նորին։

Ասէք դուք՝ թէ համաձայն իցէ այն աւանդութեան անդրստին իսկզբանէ ընդունելի եղելոյ Քրիստոսական հաւատոց։ Սուտ է այդ. և դուք հրատարակէք ի պարծանս Կաթուղիկէ հաւատոյ և ի փրկութիւն ժողովրդոց քրիստոնէից, ուր պարտէր ձեզ ասել, յանարգութիւն քրիստոնէական հաւատոյ, և ի գայթակղութիւն հաւատացելոց և արանց բանաւորաց։ Եւ հրատարակէք դուք զայդ հաւանութեամբ ժողովրդոյ, մինչդեռ հաւաքումն մարդկանդ ոչ է ժողով օրինաւոր. քանզի ժողովեալքն ի նմին ոչ դատեցին և ոչ վկայեցին՝ թէ ո՛ր իցէ հաստատուն հաւատն Եկեղեցեաց իւրաքանչիւր։

Եւ զի՞նչ է զոր սահմանեալ վճռէք։ Թէ քահանայապետն Հռովմայ յորժամ յաթոռոյ խօսիցի, ունի զշնորհս անսխալութեան, և թէ վճիռք նորա անսխալականք են ինքնին և ոչ ի հաւանութենէ Եկեղեցւոյ։ Վճռէք դուք՝ թէ այդ իցէ վարդապետութիւն ինչ յայտնեալ յԱստուծոյ։ Եթէ այդ-

պէս իցէ, զի՞ է զի ոչ ոք գիտաց զայն մինչև ցայժմ։ Ասէք թէ ցանգ այսպէս հաւատացեալ է ամենեցուն. բայց թոյլ տուք ինձ կարծել՝ թէ քաջ գիտէք դուք ինքնին՝ եթէ ոչ է ճշմարիտ բանդ։ Եւ եթէ երկմտիցէք ինչ ընդ այս, աղէ՛ յակն արկէք միանգամ զաստուածաբանութիւնս Եկեղեցւոյն ձերոյ։ Զի՞նչ տեսանիցէք ի նոսա։ Մատենագիրս՝ որք ի հնգետասաներորդ դարէ և այսր պնդեն՝ թէ պապն անսխալ իցէ, և այլ որք բացէ ի բաց մերժեն զայն։ Առաջին ապացոյց՝ թէ վարդապետութիւնդ այդ ոչ է ընկալեալ։ Այլ և տեսանէք ի նոսա, զի և այնքիկ որք զկողմն պապական անսխալութեան ունին՝ համարին զվարդապետութիւնն զայն կարծիս ինչ և եթ, և ոչ վարդապետութիւն հաւատոյ։ Եւ ահա երկրորդ ապացոյց՝ թէ վարդապետութիւնդ այդ ոչ է ընկալեալ։ Անհնարին իմն էր ձեզ ի մէջ բերել յառաջ քան զկոնդակդ զայդ և ոչ զմի ինչ գրուած արժանահաւատ և ոչ իսկ ի ձերումդ Եկեղեցւոջ, յորում պապական անսխալութիւնն դնիցի իբրև զվարդապետութիւն ինչ յայտնեալ յԱստուծոյ։ Ապա ուրեմն զնոր իմն վարդապետութիւն հնարեցիք դուք։ Ունէի՞ք արդեօք առ այն իրաւունս։ Դուք ինքնին իսկ չկարծէք բնաւ. նմին իրի առ ի հրատարակելոյ զայն հարկ համարեալ էք ասել՝ հակառակ իրացն ճշմարտութեան՝ թէ դուք արձագանգ միայն իցէք՝ կրկնող աւանդութեան Եկեղեցւոյ։

Ի վախճան միոյ միոյ ի գլխոց կոնդակիդ նշուլս արձակէք ընդդէմ այնոցիկ՝ որք չընդունիցին զվարդապետութիւնս ձեր. այլ նշովքն այնոքիկ անդրէն ի գլուխ ձեր թօթափին։ Ոչ անջատէք դուք Յեկեղեցւոյ զայնոսիկ որք մերժեն զնորահնար վարդապետութիւնս ձեր, այլ դուք ինքնին նոր ի նորոյ բաժանիք Յեկեղեցւոյ։ Կամիք դուք նորանոր հերետիկոսս և նորանոր հերձուածողս հանել կացուցանել ի միջի, և զանձն իսկ ձեր արկանէք ի հերձուած և ի հերետիկոսութիւն։

Այն ինչ ի վախճան թղթոյս ժամանեալ մեր, և ահա սկսաւ Աստուած պատուհասակոծ առնել զձեզ, Սրբազան

Հայր, ի պատճառս յանդգնութեան ձերոյ և մոլորութեանց և ամբարտաւանութեանդ։ Նախախնամութիւնն Աստուծոյ դէպ ժամանակ համարեց աւ զժամանակն՝ յորում թեւակոխէիք դուք ամբառնալ բարձրանալ զեր ի վերոյ իսկ յաջորդացն ձերոց, և խլեաց ի ձեռաց ձերոց զվերջին պատառն աշխարհական թագաւորութեան՝ զոր այնքան գուն գործէիք պինդ ունել։ Ցամին 1834 հրատարակեցիք զմոլար վարդապետութիւն անարատ յղութեան, զնելով ի մտի թէ Տիրամայրն ի շնորհուկս ձեր հաստատեսցէ զկարիսլեալ ամբոդ։ Խարեցայք դուք յակընկալութեան ձերում, և Կոյսն սուրբ առ ոչինչ գրեաց զպաշտօնն զոր համարէիք մատուցանել նմա։ Ցետ այնորիկ անկայք անկանելով ևս քան զևս, և տապաստ անկանիք յերկիր ի սմին իսկ պահու, յորում թեւակոխէիք ամբառնալ զաթոռն ձեր հաւասար ամբոդոյն Աստուծոյ։ Խելամո՞ւտ իցէք արդեօք այսմ խրատու։— Ոչ կարծեմ ես։ Սահմանեալ է Աստուծոյ ի խորհուրդս իւր՝ կորուսանել զպապականդ իշխանութիւն ոչ միայն ըստ աշխարհական ազդեցութեանն, այլ և ըստ հոգևորականին։ Վասն այսորիկ հարցէ զձեզ Աստուած կուրութեամբ։ Բաբիլոն պոռնկեալն ընդ թագաւորս երկրի, առ ի պահելոյ զպերճութիւնս իւր և սնուցանելոյ զախտս մոլութեանց, յետ ընդունելոյն զարժանին հատուցումն անառակութեանց իւրոց՝ պարտի ըստ բանից աւետարանիչ մարգարէին տալ պատերազմ ընդ սուրբն Ապոստոլոյ։ Ամբարտաւանութիւն նորա և անզգամութիւնն ունին այլ ևս ժամանակ ինչ՝ մինչև սուրբն և անարատ Եկեղեցի Քրիստոսի երևեսցի յաշխարհի ի բովանդակ պայծառութեան իւրում։ Զեռունքն գարշելիք որք սոզան առ ոտս ձեր ծածկելով զանձինս կեղծաւորաբար ընդ պաշտելի անուամբ Յիսուսի, պարտին զամենայն ջան ի գործ արկանել, և զկարծեցեալ անսխալութիւնդ ձեր չարաչար ի կիր արկանել առ ի մոլորեցուցանելոյ զոգիս մարդկան, և տիրապետելոյ ի վերայ նոցա։ Երանի՜ այնոցիկ որք ապրեսցին ի թունից նոցա, և ի բաց ելցեն ի պղծոյն Բաբելոնէ, յաղբերէ անտի մոլորութեանց, և յապականչէ ճշմարտու-

թեան։ Այս խրատ է աւասիկ զոր տայ Նոցա բարձրաձայն բարբառով աւետարանիչ մարգարէն։

Իսկ դուք, Հայր Սրբազան, չկարեմ ես յուսալ թէ դայ-ցէք ի դարձ և յապաշխարութիւն. քանզի մեղայք դուք ընդդէմ Հոգւոյն սրբոյ՝ ասելով թէ զայս ինչ ասաց Աստուած, մինչդեռ Աստուծոյ չէր խօսեցեալ։ Ապա ուրեմն զայս և եթ ուխտ սրտի մնայ ինձ առնել՝ զի սուրբ Եկեղեցին տեսեալ՝ զի դուք լցէք զչափ ամենայն անօրէնութեանցն Հռովմայ, հարցէ զձեզ սարսափելի դատաստանաւ, և հանդիսաւոր դա-տավճռով հրատարակեսցէ թէ զրկեալ էք դուք յամենայն արտօնութեանցն շնորհելոց աթոռոյն ձերում յառաջնոց ան-տի տիեզերական ժողովոց, ևս և ի պատրիարքական պատուոյն՝ որում անարժան կացուցիք զանձն ձեր, և ի բաց մերժեսցէ զձեզ ի ճշմարիտ Եկեղեցւոյն Քրիստոսի։

Այս դատավճիռ ոչ արդեօք զգաստացուսցէ զձեզ. սակայն լուսաւորեսցէ զմիտս այնոցիկ յարևմտեայց՝ որ պահեալ իցեն զսէր անխառն ճշմարտութեան յայտնեցելոյ, և զստոյգ աւան-դութեանց Կաթուղիկէ Եկեղեցւոյ։

Ի վերջ բանիցս մատուցանեմ ձեզ, Սրբազան Հայր, զՀա-ւաստիս կարեկցութեան իմոյ և արդահատանաց։

Վ. ԿԷԹԷ

Վարդապետ Ամերիկացի։

Սուրբ Էջմիածնի Մայր Աթոռի Սերբերգական Արարատ

Հայ Գրադարան Հանրապետ. Գրադարան ՀՈՒՇԱՐԱՆ Ա. Ստեփանոսի անվան

ՀՀ Ազգային գրադարան
NL0127401